2024, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (656)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



Հունիսի 17-ին **«Սոս Արևելքի քրիստոնյաներ» կազմակերպության պատվիրակությանը**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց «Սոս Արևելքի քրիստոնյաներ» կազմակերպության գլխավոր տնօրեն Բենժամին Բլանշաղի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերի այցը հայոց հոգևոր կենտրոն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց կազմակերպությանը՝ Հայաստանին և հայ ժողովրդին ցուցաբերվող աջակցության համար:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Սուրբ Էջմիածնի և կազմակերպության միջև ձևավորված գործակցությանը, որի արդյունքում արդիականացվում է Մայր Աթոռի տպարանը:

Իր հերթին պարոն Բենժամին Բլանշաղը Հայոց Հովվապետին տեղեկություններ փոխանցեց «Սոս Արևելքի քրիստոնյաներ» կազմակերպության գործունեության մասին՝ ի մասնավորի անդրադառնալով Հայաստանի տարբեր մարզերում իրականացվող կրթական, գյուղատնտեսական, առողջապահական, ինչպես նաև քրիստոնեական և մշակութային հուշարձանների վերականգնմանն ուղղված ծրագրերին:

Հունիսի 19-ին **Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ուխտավորաբար Հայաստան ժամանած Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության Բեյողլու շրջանի հայկական համայնքի վարչական և թաղային խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ Բեյողլու շրջանի հայկական եկեղեցիների հոգևոր տեսուչ Տ. Հարություն վրդ. Տամատյանի և թաղային խորհրդի ատենապետ տիար Աքսել Թոփալյանի:

Հանդիպմանը հայր սուրբը, Նորին Սրբությանը ներկայացնելով ուխտավորներին, տեղեկություններ փոխանցեց Ստամբուլի Բեյողլու շրջանի հայկական համայնքի գործունեության մասին:

Իր օրհնությունը բերելով ուխտավոր հայորդիներին՝ Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ պոլսահայ համայնքի ամուր հավատքին, ծառայավիրումին, եկեղեցասիրությանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նկատմամբ ունեցած անվերապահ սիրուն: Այս առիթով Նորին Սրբությունը հորդորեց պոլսահայ ուխտավորներին նույն նախանձախնդրությամբ զորացնել իրենց հավատքն առ Աստված, սերն առ մայր եկեղեցին և պահպանել ազգային ինքնության գիտակցությունը:

Հունիսի 25-ին **ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի Փասադենայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համայնքի ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգևոր հովիվ Տ. Սարգիս ավ. քհն. Պետոյանի:

Իր սերն ու օրհնությունը փոխանցելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետը կարևորեց աշխարհասփյուռ հայոց թեմերից նման ուխտագնացությունների կազմակերպումը, ինչը հնարավորություն է ընձեռում իրենց ուխտը Սուրբ Էջմիածնում նորոգելու, ինչպես նաև հաղորդ դառնալու հայրենիքում առկա մարտահրավերներին և իրենց զորակցությունը բերելու հայ ժողովրդին այս ծանր օրերին: Հայոց Հովվապետը պատգամեց ուխտավորներին զորանալ առ Աստված հավատքով, կրթել ու դաստիարակել իրենց զավակներին աստվածպաշտությամբ, եկեղեցասիրությամբ ու հայրենասիրությամբ:

Հունիսի 26-ին **Վերապատրաստման դասընթացների մասնակից եկեղեցականներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց երեքշաբաթյա վերապատրաստման հերթական դասընթացներին մասնակից քահանաներին:

Հանդիպմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը Հայոց Հովվապետին ներկայացրեց Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից Մայր Աթոռում մեկտեղված հոգևորականներին, անդրադարձավ վերապատրաստման դասընթացների արդյունավետությանը: ➥ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Վերապատրաստման դասընթացների մասնակից եկեղեցականներին

↩ էջ 1

Այնուհետև հոգևոր հայրերին ողջունեց և իր հայրական օրհնությունը բերեց Նորին Սրբությունը՝ ընդգծելով դասընթացների կարևորությունն ու օգտակարությունը հովվական ծառայության առավել արդյունավորման համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այս դասընթացները պատեհ առիթ նկատեց նաև հաղորդ դառնալու հայրենիքում առկա դժվարություններին և միասնաբար խորհրդածելու ազգային կյանքը հուզող խնդիրների շուրջ: Նորին Սրբությունը մասնավորաբար մտահոգություն արտահայտեց երկրի առջև ծառացած անվտանգային մարտահրավերների, արցախահայերի սոցիալական խնդիրների և ազգային կյանքում անհանդուրժողության ու թշնամանքի վտանգավոր դրսևորումների առնչությամբ: Հայոց Հայրապետը հորդորեց քահանա հայրերին իրենց պատասխանատվության ներքո գտնվող համայնքների ներգրավմամբ լծվել առկա հիմնախնդիրների հաղթահարմանը, հայրենիքի զորացման և շենացման գործին:

Իր գնահատանքը բերելով եկեղեցականներին՝ Հայոց Հովվապետը գոհունակությամբ հաստատեց, որ հոգևոր դասի նվիրյալ ծառայության շնորհիվ այսօր առավել զորանում է Եկեղեցու առաքելությունը ժողովրդի կյանքում:

Նորին Սրբությունը նաև պատասխանեց քահանաների հարցերին, որոնք առնչվում էին Եկեղեցու կանոնական, ծիսական և հովվական կյանքին:

Հունիսի 29-ին **«Իզմիրլյան» ԲԿ-ի տնօրենությանը և բուժանձնակազմին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի տնօրենությանը և բուժանձնակազմին՝ գլխավորությամբ ԲԿ-ի գործադիր տնօրեն պրոֆեսոր, բ. գ. դ. Արմեն Չարչյանի և առաջնորդությամբ կենտրոնի հոգևոր տեսուչ Տ. Հովհաննես աբդ. Թորգոմյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ներկաներին առողջապահության ոլորտում իրենց ազգաշահ և աստվածահաճո առաքելության համար՝ գոհունակությամբ ընդգծելով, որ վերջիններս իրենց մասնագիտական կարողություններն ու հմտությունները ծառայեցնում են ի խնդիր բուժման կարիք ունեցող անձանց ապաքինման:

Հայոց Հովվապետն ընդգծեց, որ Եկեղեցին հոգեփրկչական իր առաքելության ճանապարհին մշտապես կարևորել է անձի ֆիզիկական առողջությունը՝ իբրև պայման աստվածաշնորհ կյանքը լիարժեքորեն ապրելու և բարի գործերով առավել արժևորելու: Այս առնչությամբ Նորին Սրբությունը, անդրադառնալով «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի գործունեությանը, նկատեց, որ կենտրոնը, լինելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող հաստատություն, կոչված է առավել մեծ պատասխանատվությամբ ու նվիրումով իր անսակարկ ծառայությունը մատուցելու ազգի զավակներին: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Աստծու օգնականությունն ու զորակցությունը հայցեց բուժաշխատողներին՝ իրենց երախտարժան առաքելության մեջ:

Հունիսի 27-ին **ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի Մասաչուսեթս նահանգի Ուստրի Սուրբ Փրկիչ եկեղեցու համայնքի ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգևոր հովիվ Տ. Թադեոս քհն. Բարսեղյանի:

Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ տեր Թադեոսն ընդգծեց, որ ուխտավորները Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել իրենց ուխտը վերանորոգելու և հայրենիքի հետ կապը զորացնելու համար:

Հայոց Հովվապետը, իր հայրական սերն ու օրհնությունը փոխանցելով ուխտավորներին, կարևորեց Սփյուռքի հայորդյաց զորակցությունն իրենց հայրենաբնակ քույրերին ու եղբայրներին՝ Հայաստանի համար այս ծանր և դժվարին ժամանակաշրջանում:

Նորին Սրբությունն արձանագրեց, որ Ցեղասպանությունը վերապրած հայորդիները, բնակություն հաստատելով ԱՄՆ-ում, հավատքով ու լավատեսության ոգով վերակերտել են ազգային կյանքը և համախմբվելով եկեղեցու շուրջ՝ պահպանել իրենց ինքնությունը: Հայրապետը նկատեց, որ Ուստրի հայ համայնքը, լինելով հնագույնն ԱՄՆ-ում, դրա գերիվեր վկայությունն է: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ մեր ժողովուրդը նույն հավատքով ու զորեղ կամքով, համազգային միասնականությամբ ի զորու է դիմագրավելու մերօրյա բոլոր դժվարություններն ու փորձությունները, ամրապնդել հիմերը Հայոց անկախ պետականության, հետամուտ լինել տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանությանը: Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը նաև պատգամեց ուխտավոր հայորդիներին առավել աշխուժացնել համայնքային կյանքը՝ կրթելով ու դաստիարակելով իրենց զավակներին հոգևոր-ազգային արժեքներով, ամրապնդելով նրանց սրտերում սերն ու նվիրումը հայրենիքի և Հայոց եկեղեցու նկատմամբ:

Հունիսի 30-ին **ՀԲԸՄ-ի Գլոբալ առաջնորդության ծրագրի մասնակից ուսանողներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)՝ Երևանի Գլոբալ առաջնորդության ծրագրի մասնակից ուսանողներին՝ գլխավորությամբ ՀԲԸՄ-ի՝ Սփյուռքի երիտասարդական ծրագրերի տնօրեն տիկին Գայանե Մանուկյանի:

Հանդիպմանը տիկին Մանուկյանը Նորին Սրբությանը ներկայացրեց ՀԲԸՄ-ի Գլոբալ առաջնորդության ծրագիրը, որի շրջանակներում աշխարհասփյուռ հայ երիտասարդները հնարավորություն են ստանում մասնագիտական և գործնական փորձառություն ձեռք բերելու հայրենիքում, ինչպես նաև ծանոթանալու հայ մշակույթին և հոգևոր ժառանգությանը:

Ապա ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարձր գնահատելով Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից իրականացվող նմանատիպ ծրագրերը, որոնց շնորհիվ տարբեր երկրներում հասակ առած հայորդիները հնարավորություն են ստանում համախմբվելու հայրենիքում, հարստացնելու իրենց մասնագիտական փորձառությունը և հաղորդ դառնալու հայրենի իրականությանը:

Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ հակառակ երկրում առկա մարտահրավերների՝ հայրենիքից ստացած տպավորությունները ներշնչանքի նոր աղբյուր կդառնան երիտասարդների համար՝ առավել զորացած վերադառնալու իրենց համայնքներ և շարունակելու իրենց առաքելությունը ազգային կյանքում: Այս առնչությամբ Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին եռանդագին ներգրավվել հոգևոր-եկեղեցական կյանքի մեջ, ամուր պահել սերը հայրենիքի նկատմամբ, իրենց ձեռք բերած գիտելիքներով օգտակարություն բերել ինչպես տեղի հայ համայնքներին, այնպես էլ հայրենիքի բարօրությանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում Եկեղեցու կրթական ծրագրերին, հայրենիքի առջև ծառացած մարտահրավերներին ու դրանց հաղթահարմանը:

Տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի 2023—2024 թթ. ուսումնական տարվա փակումը

Հունիսի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի՝ 2023—2024 թթ. ուսումնական տարվա փակման հանդիսությունը:

Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին ՀՀ և Գևորգյան հոգևոր ճեմարանի օրհներգերը: Այնուհետև ներկաներին ողջունեց Գևորգյան հոգևոր ճեմարանի և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի տեսուչ Տ. Շահե ծ. վրդ. Անանյանը:

Հայր սուրբը, անդրադառնալով Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում ճեմարանի ունեցած նշանակությանը, ուրախությամբ արձանագրեց, որ 2023—2024 և գալիք՝ 2024—2025 ուսումնական տարիները նշանավորում են Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադրության մեկուկեսդարյա հոբելյանը: «Հայոց Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հիմնադրված ու այդ կենսավետ ավիշից սնվող այս հաստատության պատմությունն այլևս չափվելու է դարերով.... Գևորգյան ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ Մեծագործից մինչև ազգիս Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ շինարար հայրապետների խնամող շնչով ու հեռահայաց տեսիլքով է կերտվել և կերտվում դարավոր այս ավանդույթը, նրանց հայրական շունչն է, որ հաստատուն է պահում մեր բոլորիս սիրելի Գևորգյան ճեմարանը: Նրա սրբազան կամարների տակ հասակ առած մեծերն են հյուսել ճեմարանական կրթության պսակը, որն այսօր մեր վտիտ ճակատներին ենք կրում՝ որպես ճեմարանավարտ հոգևորականներ»,– ասաց հայր Շահեն:

Վերջում տեսուչ հայր սուրբն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ճեմարանի նկատմամբ ցուցաբերվող հայրական հոգածության և ուշադրության, ինչպես նաև ճեմարանի ուսուցչական-դասախոսական կազմին՝ իրենց նվիրյալ աշխատանքի համար:

Գևորգյան հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարումներից հետո դասախոսների անունից ներկաներին խոսք ուղղեց պատմ. գիտ. թեկնածու Արսեն Հարությունյանը, իսկ ուսանողության անունից սրտի խոսք ասաց 6-րդ լսարանի սան Տոնո սրկ. Ղազարյանը:

Հանդիսության ընթացքում Հայոց Հայրապետը պարգևներ հանձնեց ուսման մեջ բարձր առաջադիմություն արձանագրած ուսանողներին:

Ցերեկույթն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական պատգամով ու օրհնությամբ: Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ Մայր Աթոռի տարեգրության մեջ արձանագրվել է արդյունավոր ուսումնառության, գիտելիքների ամբարման ու հոգևոր զարգացման ևս մեկ տարի: Անդրադառնալով ճեմարանի 150-րդ տարեդարձին՝ Վեհափառ Հայրապետն արձանագրեց. «Մեծ հոբելյանը մեկ անգամ ևս մեզ հիշեցնում է հոգևոր-կրթական հաստատությունների կոչման ու առաքելության և դարավոր ավանդների պահպանության կարևորությունը: Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ Հայրապետը, ինչպես մշտապես մեր Եկեղեցին, կրթության մեծ ջատագովն ու խրախուսողն էր, առավել ևս՝ հոգևոր կրթության, որը պայմանն է բարոյական արժեքներով առողջ հասարակության կազմավորման, մարդկային կյանքի աստվածօրհնյալ ընթացքի»: Նորին Սրբությունը հավելեց, որ մեկ և կես դար շարունակ Գևորգյան ճեմարանը՝ հակառակ հայ ժողովրդի ապրած ծանր տարիների և կրած մեծ դժվարությունների, կրթել է արժանավոր եկեղեցականների և մտավորականների, ովքեր ազգային կյանքում վառ են պահել հոգևոր լույսի ջահը, առաջնորդել ազգի զավակներին և զարկ տվել նրանց առաջադիմությանը: Հայոց Հովվապետն ընդգծեց նաև հոգևորականների առաքելության կարևորությունը ներկա ժամանակներում. «Հայրենի մեր երկրի առջև այսօր ծառացած արտաքին և ներքին մարտահրավերները, հայրենիքում և սփյուռքի համայնքներում տիրող անհանդուրժողության ու թշնամանքի մերժելի դրսևորումները, ազգային արժանապատվության շարունակ ոտնահարման և խորացող հուսալքության մտահոգիչ երևույթները, ապագայի շուրջ համընդհանուր հեռանկարի բացակայությունը վկայում են, թե որքա՛ն բարդ և խորն են հիմնախնդիրները, որով և՝ մեծ ու բազմազան սպասումները Հայ Եկեղեցուց և եկեղեցականությունից:

➥ էջ 3

Տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի 2023—2024 թթ. ուսումնական տարվա փակումը



➥ էջ 2

....Անտարակույս, մեր կյանքի հավատավոր ու հայրենասեր ընթացքով, անձնդիր, բոլորանվեր ծառայությամբ ու սկզբունքային կեցվածքով պիտի լուծումներ ստանան մեր Ժողովրդի առջև ծառացած ներկա բարդ ժամանակների խնդիրները, վերացվեն մոլորեցնող գործողություններն ու երևույթները և հաղթահարվեն աստվածամերժ ու կորստաբեր ընթացքները հայրենական մեր կյանքում: Հավատում ենք, որ իբրև Եկեղեցի՝ մեր Տիրոջ առաջնորդությամբ և մեր Ժողովրդի միասնական ջանքերով, անպարտ ու զորավոր ոգով պիտի կարողանանք գտնել դեպի խաղաղ ու ապահով հանգրվաններ առաջնորդող ուղիները»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև շեշտեց, որ մեր երկրին պատուհասած փորձությունները հնարավոր է հաղթահարել միայն առ Աստված ապավինությամբ ու ազգային միասնությամբ, ամուր պահելով հավատը, քրիստոնեական արժեքներով զորացնելով ու վեր բարձրացնելով մեր կյանքը և հաստատելով այն արդարության շավիղներում՝ զերծ պառակտումներից ու փլուզումներից, անտարբերությունից, անհոգի ու մակերեսային մտայնությունից: Այս առնչությամբ Հայրապետը հորդորեց ապագա եկեղեցականներին իրենց ծառայությամբ հայորդիների սրտերում հաստատել սիրո, հույսի, հավատի տերունապարգև շնորհները և սեփական օրինակով առատացնել հավատարմությունն ու նվիրումը հայրենիքի, հայի ինքնության ու ազգային սրբություններին նկատմամբ:



Ամավերջյան փակման հանդիսության առիթով Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց տեսչական անձնակազմին և դասախոսներին՝ թելադրելով վերջիններիս հոգևոր կրթօջախի դերի ու կարևորության բարձր գիտակցությամբ շարունակել կրթել հավատավոր, եկեղեցասեր ու հայրենասեր հոգևորականների և Աստծո Խոսքի անհոգնաբեկ ավետարանողների:



Նորին Սրբությունը նաև մաղթեց, որ Բարձրյալն առավել պայծառացնի ճեմարանականների միտքն ու հոգին, ամուր պահի հավատի, ինչպես նաև աննահանջ՝ ժողովրդին ու հայրենիքին ծառայելու սրբազան կոչման մեջ:

Վերջում Գարեգին Երկրորդ Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված, որ Տերն Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղություն և անվտանգություն պարգևի հայրենի մեր երկրին, բարօր կյանք՝ աշխարհասփյուռ հավատավոր մեր ժողովրդին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Աստվածամոր կերպարը Ավետիս Ահարոնյանի «Մայրերը» պատմվածքում

Ավետիս Ահարոնյանը (1866—1948) հայ գրականության և հասարակական-քաղաքական կյանքի մեծ երախտավորներից է: Նա Գևորգյան հոգևոր ճեմարանի շնորհալի սաներից էր (ճեմարանական ուսումը կիսատ է թողել աչքերի տկարության պատճառով): Այդ տարիներին Ա. Ահարոնյանի հետ ճեմարանի սաներ էին Ա. Իսահակյանը, Լ. Շանթը, Կոմիտասը, Մ. Աբեղյանը, Գարեգին Հովսեփյանը, նաև ազգային-ազատագրական շարժման որոշ ներկայացուցիչներ: Հետագայում Ահարոնյանը Բոստոնի «Հայրենիք» հանդեսում հրատարակեց «Իմ գիրքը», որտեղ մի ամբողջ գլուխ նվիրեց ճեմարանին, իր ուսուցիչներին ու ճեմարանական ընկերներին:

Գրողի քրիստոնեական մտածելակերպը, հոգեկերտվածքը սկսեցին ձևավորվել դեռ մանկուց մոր՝ Զարդարի շնորհիվ: Մայրը որդուն հայերեն էր սովորեցնում Նարեկով և Սաղմոսով: «Իգդիրմաւացի այդ պատանին իրենց գիւղի ծաղիկներու հոտով մեծցած եւ Արարատի շուքը իր լայն ճակատին՝ դարձաւ հայ մեծ գրագէտը իր ինքնուրոյն ոճով» («Բագին» ամսագիր, թիւ 8—9, Պէյրութ, 1966, էջ 20, 22):

Ահարոնյանի ուշագրավ պատմվածքներից է «Մայրերը», որը գրեց 1902 թ.: Գրողը պատմվածքն սկսում է եկեղեցում պալաս առ պալաս բարձրացող խունկի և քահանայի՝ աղոթք մրմնջալու պատկերով: Պատկերակերտման այդքան տպավորիչ և գեղեցիկ արվեստին, անշուշտ, նպաստել է նաև ճեմարանի ազդեցությունը:

Պատմվածքի գեղագիտական նպատակն է վեր հանել Աստվածամոր կերպարը և հակադրել տարիքավոր կնոջ՝ Սուսանի կերպարին: Աստվածամայրն ու այդ կինը փորձում են հասկանալ միմյանց մտքերը: Ահարոնյանը ցույց է տալիս, որ Տիրամայրը վերևում է՝ սյան վրա. *«....սևացած սեան վրայ կախուած էր Աստուածածնի նկարը մի մգլաւ, դեղնած շրջանակի մէջ»*, Սուսանը ներքևում՝ գետնի վրա: Մեկը սուրբ է, կարող, հրաշագործ, մյուսը՝ խեղճ, վշտահար: Աստվածամայրն իր Միածնի փոքրիկ, գանգրահեր գլուխը սեղմել է կրծքին և ժպիտով նայում է ներքև՝ բազմությանը: Գրողն ամբողջությամբ պատկերում է նկարը՝ շրջանակի վրա դնելով վեց մեղրամոմ, որ վառվում էին և իրենց խորհրդավոր լույսով աղոտ փայլ տալիս Տիրամոր հեզ դեմքին ու փոքրիկ Քրիստոսի ձյունափայլ մարմնին. *«Այդ փայլի մէջ լողում էր, ինչպէս մուգ լճի վրայ վաղորդեան մշուշի մէջ լողացող սպիտակ կարապը»* (էջ 5):

Հետաքրքրական է, թե հեղինակն ինչ ձևով է խունկի ծուխը ներկայացնում: Այն չորս կողմից Աստվածամոր և Զավակի շուրջն է պտույտներ անում, կարծես աշխատում է վեր տանել այդ երկնային զույգին: Պատմվածքում Տիրամոր պատկերից չեն հեռանում Սուսանի արտասվաթոր աչքերը: Տիրամոր պատկերի մոտ տարիներ շարունակ այդ կինը կրակի, ցավի, պաղատանքի խոսքեր է ասել և աղոթել: Իր կրկնվող աղոթքի մեջ նա միշտ դիմում է հետևյալ բառերով՝ «սուրբ Տիրամէր», «բոլոր ցաւոտ սրտերի, վշտացած հոգիների, մղկտացող մայրերի գթոտ մայր», «անճարների մայր», «ողորմած թագուհի», «ողորմած մէրիկ» և այլն:

Ա. Ահարոնյանն ստեղծում է այնպիսի պատկեր, որը տանում է «ներքևի» կնոջ մղկտացող սրտի բռնկմանը՝ առաջացնելով նախանձ. *«Փրկիր նրան, իմ զաւակին, Տիրամէր, բարեխօս եղիր Նրա մօտ, որ այնպէս սիրով գրկել, սեղմում ես քո սուրբ կրծքին. տես՝ Նա ինչպէս փարում է քո մայրական ստինքներին, ինչպէս ուզում է լսել քո սրտի ձայնը, մա՛յր, մա՛յր, ախր ես էլ եմ մայր, ես էլ սիրտ ունեմ, կուրծք ունեմ...»* (էջ 8—9):

Տիրամոր սիրտը լայն է, սերը՝ անչափ: Գրողն իր պատմվածքում նաև անդրադառնում է բոլոր մարդկանց սրտի ցավերի բուժմանը, այսինքն՝ կնոջ կերպարի մեջ ամփոփում է համամարդկային խնդիր: Սպասող կինն աղաչում է, որ նախ Աստվածամայրը հասնի ուրիշ խեղճերին, նեղյալներին, ամենավերջում միայն լսի իր ձայնը:

Աստվածամորը և Քրիստոսին ամբողջ պատմվածքում հետևում է ներքևում հայացքը պատկերին հառած կինը, նույնիսկ այն ժամանակ, երբ մոմերը մեկիկ-մեկիկ այրվում են, մարում, իսկ երկնային զույգի դեմքերը կորչում են խավարի մեջ, եկեղեցին դատարկվում է: Հեղինակը կերպարի աղոթող շուրթերով ասում է, որ նա էլ մայր է, սիրտ ունի, սրտի մրմուռը կհասկանա, մի հնար կանի: Ջերմեռանդ աղոթող կնոջը քահանայի խոսքի ժամանակ Տիրամայրը ժպտում է: Սա առիթ է դառնում, որ կնոջ սրտում հույսը վարդի պես բացվի:

Աստվածածնի հետ անընդհատ երկխոսության մեջ է պատմվածքի կինը. կարծես թե տեսնում է և փորձում լսել նրա պատասխանը: Վշտից կեղեքված հերոսուհին սկսում է մեղադրել եկեղեցուն՝ ասելով, որ ամեն օր դուռը գնաց, մատները տրորեց մոմ վառելով: Այս դեպքում քահանան միջնորդ է լինում «ներքևի և վերևի կնոջ» միջև: Քահանան փորձում է բացատրել, որ Աստված հավանաբար ուզում էր, որ նա չիմանար որդու մահը: Տիրամոր ժպիտն սկսում է պատմվածքի հերոսուհուն վշտացնել: Նա մտածում է, թե խաբել է Տիրամայրը, և գոնե երազով հայտներ կնոջը, որ իր արևը խավարել, օջախը մարել է:

Քահանան ցույց է տալիս Ավետարանի երեսին պատկերված խաչելությունը: Ասում է, որ այստեղ նույն Տիրամայրն է պատկերված՝ իր խաչված Քրիստոսի ոտքերի տակ, և սգում է: Քահանան բացում է կնոջ աչքերը՝ ասելով, որ նա միայն երջանիկ Տիրամորն է տեսել, ուրեմն պիտի տեսնի նաև այս սգավոր, դժբախտ Տիրամորը, որի սիրտը քանի՜ սուր է մտել. չէ՞ որ նրա Որդին է խաչված վերևում՝ մեր բոլորի և աշխարհի փրկության համար: Աստվածամայրը կին է, մայր. նա բարի է, գթասիրտ: Նա է, որ Որդու առաջ բարեխոս է լինում մարդկանց անթիվ մեղքերի համար:

Ահարոնյանի պատկերած հերոսուհին՝ Սուսանը, աղոթող կերպար լինելով, խելագարվում է, չարանում, բայց և իրեն վերագտնում՝ հասկանալով, որ Տիրամոր ցավն ավելի մեծ է:

Գրողը փորձում է ցույց տալ, որ բոլորից մեկը՝ հասարակ գյուղացին, հարաժամ աղոթքի մեջ էր եկեղեցում և խունկի ծուխն իր վրա վերցնելով՝ խնդրում էր Աստվածածնին բոլորի համար, վերջում՝ իր համար: Սա մի տեսարան է, որն անընդհատ հետևում է ընթերցողին:

Հայ գրականության մեջ նաև Պարույր Սևակն է «Բարեխոս եղիր իմ և իմ միջև» բանաստեղծության մեջ օգնություն խնդրում Մարիամից, նրա բարեխոսությունը ցանկանում: Եթե համեմատելու լինենք այս երկու գործերը, ապա կտեսնենք, որ երկու հեղինակներն էլ փորձում են իրենց գործերում գտնել ինքնահաշտություն, նաև աշխարհի հետ հաշտություն. *«Օգնի՛ր ինձ, Մարիամ, // Եվ ասեմ՝ ինչո՛ւվ, // Բարեխոս եղիր ի՛մ և ի՛մ միջև, // Որ բանն ավարտվի ինքնահաշտությամբ»:*

Ռաֆայել Սանտի, «Սիքստինյան Տիրամայր», 1512—1513 թթ.

Պոլսահայ բանաստեղծներից Զահրատը նույնպես ունի Աստվածածնի պատկերի առաջ մոմ վառելու տեսարան ներկայացնող բանաստեղծություն՝ «Երկու հատ մոմ» վերնագրով: Ուշագրավ բառամթերքով պոլսահայ բանաստեղծը մեզ ներկայացնում է իր խոսքը Տիրամոր պատկերի առջև: Նա ասում է, որ եթե մոմ վառելով բավարարված է զգում Տիրամայրն իրեն, եթե մոմով կատարվելու են իր իղձերը, ապա թող լինի այնպես, որ քայլ առ քայլ հասնի երջանկության: Նա կարծես թե երկխոսության մեջ է մտնում Աստվածամոր հետ՝ ասելով, որ նա գիտի, թե իրեն ինչ է պետք երջանիկ լինելու համար: Զահրատը նորից հիշեցնում է Տիրամորը, որ այդ երկու մոմերից մեկն ինքն է.

Այդ մյուս մոմն ալ հավանաբար կճանչնաս, թե որունն է,
Անոր մասին շատ եմ խոսեր քեզի հետ,
Ան գուցե Աստվածամոր կամ Աստուծո մասին շատ բան չի գիտեր,

Բայց հոգ չէ և կամ ան
Սա վայրկյանիս լուր չունի, թե մոմ մըն ալ իրեն համար վառեցի:

Զահրատը բանաստեղծության մեջ երկու անգամ կրկնում է «Աստվածամայրս իմ դուն» արտահայտությունը, որը նաև առկա է Ահարոնյանի պատմվածքում:

Այսպիսով՝ Ահարոնյանն իր պատմվածքում վեր հանեց Տիրամոր կերպարը և ցույց տվեց մոր իրական կյանքը:

Պատրաստեց ՕՖԵԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Պայքար ընդդեմ Հայոց Եկեղեցու պատմության իմացության

Հարցազրույց պատմաբան Արման Մալոյանի հետ

— 2018 թ. Հայաստանի հանրակրթական դպրոցներում քննարկումներ սկսվեցին «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման նպատակահարմարության շուրջ: Առաջ էին քաշվում հարցադրումներ, որ դասընթացը պետք է տարրալուծել այլ առարկաներում կամ սահմանափակվել՝ մեկ-երկու դասարանում դասավանդելով: 2021-ին հաստատվեց հանրակրթության պետական չափորոշիչը: Հետո ԿԳՄՍ նախարարությունը որոշեց, որ 2023—2024 ուսումնական տարվանից «Հայոց Եկեղեցու պատմությունը»՝ որպես առանձին առարկա, չի լինելու և ներառվելու է «Հայոց պատմություն» առարկայի դասագրքերում: Ըստ Ձեզ՝ ի՞նչ քաղաքականություն է դա, նման որոշման անհրաժեշտություն կա՞ր արդյոք:

— Նախ պիտի ասեմ, որ մասնագիտական ոլորտում նման որոշում կայացնելու համար անհրաժեշտ էր, որ առարկան դասավանդող ուսուցիչների, նաև մյուս շահառուների՝ դպրոցների տնօրենության, ծնողների, սովորողների շրջանակներում հարցախույզ արվեր, տեսակետները վերհանվեին ու վերլուծություններ կատարվեին, այնուհետև համապատասխան եզրակացություններ արվեին: Այսինքն՝ պարզվեր՝ արդյո՞ք նպատակահարմար է առարկայի դասավանդումը. եթե՝ այո, ապա համապատասխան բարեփոխումներ ձեռնարկեին, իսկ եթե մեծամասնությունը դեմ լիներ, գուցե այդ դեպքում արդարացված լիներ առարկայի հանդեպ նման վերաբերմունքը: Ցավոք, մեր երկրում բավականին երկար ժամանակ է (խոսքը միայն վերջին հնգամյակին չի վերաբերում, նաև դրանից առաջ)՝ որոշումներ կայացվելիս հաշվի չեն առնվում շահառուների, ներգրավված կողմերի կարծիքները: Լավագույն դեպքում մեկ-երկու քննարկումների արդյունքում որոշումներ են կայացվում, դրվում շրջանառության մեջ, երկար ժամանակ շարունակվում են փորձարկումները կամ աշխատանքները, և միայն հետագայում՝ շատ ուշացած, ի հայտ են գալիս խոչընդոտներ, անհամապատասխանություններ, ոչ ճիշտ հարմարեցումներ: Մի խոսքով՝ արդյունքը գոհացուցիչ լինելուց շատ հեռու, նույնիսկ բավարար չի լինում:

Չգիտեմ՝ այդ որոշումը սովորույթի ուժով նման քաղաքականության շարունակությո՞ւն էր, թե՞ ամբողջապես թիրախավորված կամ նպատակային քաղաքականություն: Ամեն դեպքում իրականությունն այն է, որ առարկայի նկատմամբ նման վերաբերմունք դրսևորվեց: Նախ՝ տարածվեցին լուրեր, թե բովանդակային նյութը ներառվելու է «Հայոց պատմություն» առարկայի մեջ, ընդ որում՝ ի սկզբանե մասնագետները դժգոհ էին «Հայոց պատմություն» առարկային հատկացված ժամաքանակից, քանի որ դասընթացի ծավալը բավականին մեծ է: Նախկինում 6—9-րդ դասարաններում «Հայոց պատմություն» առարկային հատկացված էր շաբաթական 1,5 ժամ, այսինքն՝ մի կիսամյակում՝ շաբաթական 1 ժամ, հաջորդ կիսամյակում՝ 2 ժամ, կամ՝ հակառակը: Թեև որոշ դպրոցներ նաև իրենց պարտադիր ժամաքանակից կես ժամ հատկացնում էին, և ամբողջ տարին առարկային տրվում էր շաբաթական 2 ժամ, բայց ամեն դեպքում «Հայոց Եկեղեցու պատմությունը» ներառելուց հետո, բնական է, որ այդ երկու ժամը չէր բավականացնելու: ԿԳՄՍ նախարարությունը, որպես հարցի լուծում, առաջարկում էր «Հայոց Եկեղեցու պատմության» 236 դասաժամի փոխարեն նախատեսել ընդամենը 64-ը: Սակայն մոտեցումը, բնականաբար, բացարձակապես անընդունելի է թե՛ հոգևոր և թե՛ ազգային շահերի տեսանկյունից:

Հանրակրթական դպրոցում առանձին առարկաներին հատկացված ժամաքանակն առհասարակ չի գոհացնում դասավանդող ուսուցիչներին: Սա խոր ուսումնասիրության հարց է: Այն, որ հատկացված ժամաքանակը բավարար չէ առարկան լիարժեք ուսումնասիրելու համար, ակներև դարձավ նաև նոր չափորոշիչների և ծրագրերի ներդրման ընթացքում: Դրա ականատեսը եղանք վերջերս՝ մասնավորապես 7-րդ դասարանի օրինակով. «Հայոց պատմության»՝ մասնագիտական և ուսուցչական հանրույթի կողմից չընդունված, բազմիցս մերժված ու չհաջողված այդ դասագրքում ծրագրային և հատկապես «Հայոց Եկեղեցու պատմության» դասանյութերը «դուրս են մնացել» հեղինակի ուշադրությունից: Եվ երբ դրա մասին բարձրաձայնվեց, հեղինակը փորձեց արդարանալ, թե իբր դասագիրքն այլևս նման ծավալի նյութ պարունակելու, այսինքն՝ ծրագրային ամբողջ նյութը շարադրելու խնդիր չունի իր առջև դրված, և երկրորդ՝ նույնիսկ եթե դա իրագործվեր, ապա 176 էջի սահմանում հնարավոր չէր ծրագրային ամբողջ նյութը ներկայացնել: Ակնհայտ է, որ դա արդարացում է ընդամենը: Ստացվում է այնպես, որ միտումնավոր կամ ոչ միտումնավոր (ըստ իս՝ ուղղորդված դիտավորությամբ), բայց, ի վերջո, դասագրքում ներկայացված չեն այն դասանյութերը, որոնք նախկին ծրագրով «Հայոց Եկեղեցու պատմության» դասանյութերն էին, իսկ առարկայական նոր ծրագրով պետք է ներառված լինեին «Հայոց պատմություն» առարկայի դասագրքի մեջ: Եվ հենց դրանք էին դուրս մնացել:

— Ինչո՞վ է կարևոր «Հայոց Եկեղեցու պատմության» դասավանդումը, ի՞նչ էր տալիս այն մեր աշակերտներին, և, ի վերջո, եթե ՀՀ քաղաքացիների մեծամասնությունը քրիստոնյա է ու Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ, ինչո՞ւ չպետք է մեր երեխաները սեփական դավանանքի մասին հավելյալ գիտելիքներ ստանան դպրոցում:

— Դասընթացը, իհարկե, աշխարհիկ դասընթաց է, ամենևին էլ կրոնական դասընթաց չէ: Սովորողները, մեր ունեցած տեղեկություններով, բավականին լավ էին վերաբերվում առարկային, և ուսումնարության ընթացքում զգալի առաջընթաց էր գրանցվում: Դրա ապացույցներից մեկը «Հայոց Եկեղեցու պատմության» ամենամյա օլիմպիադան էր, որին, պետք է նշենք, հանրակրթական մյուս առարկաների համեմատությամբ ոչ պակաս, իսկ երբեմն էլ որոշ առարկաներից նույնիսկ ավելի մեծ մասնակցություն էին դրսևորում սովորողները: Դասընթացը սիրված էր, օգտակար, նպաստում էր դպրոցում հայեցի դաստիարակությանն ու ազգային արժեհամակարգի ձևավորմանը, նաև քրիստոնեական և ընդհանուր բարոյագիտության հիմունքներով քաղաքացու, մարդ անհատի բարոյական կերպարի, ազգային նկարագրի ձևավորմանը, հայ ազգային քրիստոնեական մշակույթը կրողի, պահպանողի ու զարգացնողի դեր ստանձնելուն: Այն աշակերտին տալիս էր ազգային-քրիստոնեական մշակույթն ուսումնասիրելու, արժեքները գնահատելու և համաշխարհային մշակույթում մերն արժևորելու հմտություններ: Դասընթացն անհրաժեշտություն էր և չպետք է նման վերաբերմունքի արժանանար:

— Արդյո՞ք «Հայոց Եկեղեցու պատմության» դասավանդումն ինչ-որ «վտանգ» էր ներկայացնում ազգային ու կրոնական փոքրամասնությունների համար կամ խաթարում էր ժողովրդավարությունը:

— Չեմ կարծում, որովհետև սկզբնական շրջանում որոշ դեպքեր եղան՝ ոչ այնքան կրոնական կամ դավանական հիմքով, որքան ազգային պատկանելության: Հատկապես Հայաստանում որոշ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից՝ եզդիներ, քրդեր և այլն, եղան որոշակի մտավախություններ, սակայն դրանք հաղթահարվեցին, որովհետև ծնողներն էլ հասկացան, որ առարկան ամենևին էլ քարոզչության նպատակ չի հետապնդում, նպատակ չունի ստվարացնելու Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդների թիվը: Դա ընդամենը ՀՀ քաղաքացիների բացարձակ մեծամասնության՝ Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ լինելու հանգամանքով էր պայմանավորված և անհրաժեշտություն էր: Մի խոսքով՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար պարզ դարձավ, որ դասընթացը վտանգ կամ սպառնալիք չի պարունակում, մանավանդ որ առարկայի ուսումնասիրության շրջանակներում ծանոթանում էին նաև համաշխարհային կրոններին և քիչ ավելի մանրամասն՝ քրիստոնեությանն ու Հայոց Եկեղեցու պատմությանը, հայ ժողովրդի պատմական ճակատագրում Հայոց Եկեղեցու ունեցած դերին ու նշանակությանը, համազգային նշանակության տարբեր իրադարձություններին մասնակցությանը, ազգային մշակույթի վրա Հայոց Եկեղեցու ազդեցությանը:

Առարկան ավելի շատ քաղաքակրթական, մշակութային դասընթաց էր, այն քրիստոնեական ազգային մշակույթի ակունքներին, զարգացման ընթացքին ու ձեռքբերումներին ծանոթացնելու և այդ մշակույթի հոգեբանությամբ դաստիարակելու նպատակ էր հետապնդում և ամենևին էլ չուներ քարոզչական որևէ նպատակ:

— Որոշումն այն է, որ «Հայոց Եկեղեցու պատմությունը» ներգրավվի, տարրալուծվի «Հայոց պատմության» մեջ: Մենք ականատես եղանք, որ նոր չափորոշիչներին համաձայն պատրաստված 7-րդ դասարանի «Հայոց պատմության» դասագիրքը լեցուն է բազմաթիվ սխալներով: Այս դեպքում ևս ԿԳՄՍ նախարարությունը չնահանջեց, և նախարարը հայտարարեց, որ դասագիրքը կմնա շրջանառության մեջ: Այդ որոշումը ինչպե՞ս կբացատրեք: Արդյո՞ք քաղաքական միտում կա այս ամենում:

— Բնականաբար, սկզբից արդեն բացահայտվել էր այդ միտումների մեծ մասը, մանավանդ որ մրցույթին ներկայացված երեք դասագրքերից ի վերջո հաղթող դուրս եկավ հենց այդ տխրահռչակ դասագիրքը: Արդեն իսկ առաջին փուլում մրցույթին ներկայացված դասագրքերից մեկը ցածր միավորներ ստացավ և առաջին փուլից դուրս մնաց, որովհետև հիմնական մասով չէր համապատասխանում նոր չափորոշիչներին ու ներկայացված ծրագրային պահանջներին: Հաջորդիվ մնացին երկուսը, ընդ որում՝ մինչև սեպտեմբեր էլեկտրոնային տարբերակով երկուսն էլ մնացել էին Դասագրքերի շրջանառու հիմնադրամի կայքէջում: Հետո պարզվեց, որ բողոքների արդյունքում դասագրքերի «կրկնակի փորձաքննություն է իրականացվել», ինչի արդյունքում երկրորդ մրցութային դասագիրքը՝ Աշոտ և Արսեն Ղուկասյանների հեղինակությամբ, որը նախորդ փուլում ավելի բարձր միավորներ էր հավաքել, քան երաշխավորված և ներկայումս գործածության մեջ գտնվող մյուս դասագիրքը, ստացավ ավելի պակաս միավորներ, նույնիսկ գիտականությանը չհամապատասխանելու «մեղադրանքով» դուրս բերվեց շրջանառությունից: Հեղինակներին տրված՝ նախարարության պատասխանում գիտականությանը չհամապատասխանելու վերաբերյալ մեկ-երկու, ոչ այնքան հիմնավորված դիտարկումներ էին ներկայացված, այնինչ գործող դասագրքում մեծ թիվ են կազմում մասնագիտական լուրջ սխալներն ու վրիպումները, դիդակտիկ առումով քարտեզները ներկայացված են որպես դասագրքի ձևավորմանը բնորոշ տարր և ոչ այնքան ուսումնական նշանակություն ունեցող, որովհետև դրանց մեծամասնության պարագայում բացակայում էին լեգենդաները՝ պայմանանշանները, որոնք քարտեզը կարդալու բանալին են, և քարտեզի հետ աշխատանքը ուսուցիչը կազմակերպում է հենց այդ օժանդակող, պայմանական նշանների օգնությամբ: Այսինքն՝ գործածության մեջ մնացած դասագիրքը, գիտական առումով, զգալիորեն ավելի ցածր մակարդակ ունի, քան գործածությունից դուրս բերված դասագիրքը, հետևաբար ակնհայտ է, որ ԿԳՄՍ նախարարությունը նպատակաուղղված քաղաքականություն էր տանում, որ միակ հաղթողը մնար այդ դասագիրքը, և այդպես էլ եղավ: Ակադեմիական, մասնագիտական, ուսուցչական հանրության բարձրաձայնած սխալները, անհամաձայնությունները, մանկավարժամեթոդական դիտարկումները, այդ թվում՝ առաջադրանքներին, դասանյութի բովանդակությանը, նյութի շարադրանքի թերություններին վերաբերող, անտեսվեցին:

7-րդ դասարանի «Հայոց պատմության» դասագիրքը որակապես զգալիորեն զիջում է «Հայոց պատմության» նախորդ դասագրքերին և մրցույթի ներկայացված մյուս դասագրքին, բայց ԿԳՄՍ նախարարության կանխակալ ու աչառու գործունեության շնորհիվ ճանաչվեց հաղթող ու մնաց գործածության մեջ: Թեև մասնագետներն ու ուսուցիչները հետագայում շարունակեցին իրենց բողոքներն արտահայտել, սակայն ԿԳՄՍ նախարարությունն անդրդվելի մնաց, չանսաց մասնագետների և դասավանդող ուսուցիչների հիմնավորված բողոքներին ու փաստարկումներին, հնարավորինս ձգձգեց դասագրքի խոտանման գործընթացը և այդպես էլ այդ ձախողված ու մերժված դասագիրքը թողեց գործածության մեջ:

Ի վերջո հեղինակը երկու անգամ պատրաստեց ներկայացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ իր պատասխանը, թե դրանցից որը որքանով է ընդունելի, որքանով է ինքը համամիտ դրանց: Հեղինակի այդ պատասխանները, ընդհանուր առմամբ, ընդամենը տասը էջով էին պակաս դասագրքի ծավալից: Ստացվում է այնպես, որ ուսուցիչը յուրաքանչյուր դասից առաջ պետք է աշակերտների հետ դասագրքի սխալների ուղղում կատարեր, այնուհետև անցներ իր բուն գործին: Բնականաբար, առանց այդ էլ ժամաքանակի սղության և ծրագրային նյութը տրված ժամանակահատվածում յուրացնելու առումով խնդիրներ կային, և ուսուցիչները չէին հասցնում իրականացնել այդ ամենը մեկ դասի ընթացքում. այսինքն՝ դա նոր, լրացուցիչ ծանրաբեռնվածություն, աշխատանք էր ուսուցչի համար: Բայց, ինչպես ասացինք, այս ամենը բարձրաձայնելուց ոչինչ չփոխվեց, նախարարությունը գնաց այն ճանապարհով, որ ձգձգեց գործընթացն ու, այո՛, հասավ նրան, որ ուսումնական տարին ավարտվեց, և դասագիրքն այդպես էլ դուրս չբերվեց գործածությունից: Բայց ի սկզբանե հենց այն պահանջն էր դրված, որ անորակ դասագիրքը դուրս բերվի շրջանառությունից, մինչև որ դասագիրքը կհամապատասխանեցվի գործող չափորոշչային ու ծրագրային պահանջներին և զերծ կլինի մասնագիտական այդքան մեծաքանակ լուրջ սխալներից, էլ չասեմ կետադրական, ուղղագրական սխալների ու վրիպակների մասին: Ցավալիորեն, հեղինակը ներկայացված դիտարկումների մեծ մասը որակել է «վրիպակ»: Վրիպակ կարելի է համարել, երբ այս կամ այն տառի փոխարեն բոլորովին ուրիշ տառ է տպագրված լինում, կամ բառի վերջին տառը կամ ստորակետն է դուրս մնացած լինում, բայց ո՛չ այն, որ, օրինակ, 370-ի փոխարեն 70 է տպագրված, կամ որ նշված չէ՝ իրադարձությունը Քրիստոսի ծննդից առաջ է տեղի ունեցել, թե՞ հետո: ➥ *էջ 5, 6*

Հայաստանում գործող հիմնական աղանդները և դրանց վտանգավորությունը

Եթե միջնադարյան աղանդավորական շարժումները հիմնականում սոցիալական բնույթ ունեին և տեղի սոցիալ-քաղաքական իրավիճակի ծնունդ էին, այսօր վիճակը բոլորովին այլ է. օտարամուտ, օտարածին աղանդները պառակտում են մեր հասարակությունը և խարխլում մեր պետականության հիմքերը:

Միջնադարյան և այսօրվա աղանդների միջև կան մի շարք նմանություններ, բայց և առկա են բազմաթիվ տարբերություններ: Հայաստանում ներկայումս գործում են բազմաթիվ աղանդներ, որոնցից են Եհովայի վկաները, հոգեգալստականները, մորմոնները, մունիստները և այլն: Այս բոլոր աղանդները Հայաստան հասնելուց առաջ որոշակի ճանապարհ են անցել: Ժամանակակից աղանդավորական շարժումներն սկիզբ են առել 1830-ական թթ. ամերիկյան մայրցամաքում: Դրանցից երբևէ գոյություն ունեցածներից հարկ է առանձնացնել ամերիկյան աղանդավորական շաժումների առաջամարտիկը դարձած *մորմոններին:* Մորմոններից հետո ասպարեզ իջած բազմաթիվ այլ աղանդներ ոգեշնչված էին և որոշակի նմանություններ ունեին նրանց հետ:

Մորմոնների աստվածաբանությունը խճճված մի հանգույց է, որը պարզորեն պատկերացնելը և այն հավատացյալներին մատչելի ներկայացնելը գրեթե անհնար է: Պատճառն այն է, որ մորմոն աստվածաբանության մեջ կան բազմաթիվ հակասություններ, վրիպակներ, իրարամերժ դրույթներ, որոնք նրանց առաջնորդները դժվարությամբ են քողարկում և հաճախակի ստիպված են լինում նոր գաղափարներ առաջ բերել կամ փոխել իրենց տեսակետները այս կամ այն հարցի շուրջ՝ ավելի համոզիչ թվալու և իրենց անսխալականությունն ապացուցելու համար:

Ընդհանրապես աղանդներին հատուկ է փոփոխվելն ըստ բնակավայրի և ազգային մտածելակերպի՝ հարմարվելով տվյալ հասարակությանը: Օրինակ՝ իրենց գործունեության սկզբնական շրջանում մորմոններն ընդունում էին բազմակնությունը, իսկ արդեն շուրջ 117 տարի է՝ սկսած 1890 թվականից, այս երևույթն անընդունելի են համարում ամերիկյան մայրցամաքում: Պատճառը բավականին պարզ է. այստեղ օրենքով արգելված է բազմակնությունը: Մինչդեռ նրանք միանգամայն հանդուրժող են և ընդունելի են համարում նույն երևույթը մահմեդական երկրներում, որտեղ բազմակնությունը թույլատրված է տվյալ երկրների օրենքներով:

Մորմոն դավանանքին հատուկ է էկլեկտիկորեն ընդօրինակելը և այն նույնությամբ այլ տեղերում և պայմաններում հարմարեցնելը:

Մորմոն դավանաբանության հիմնադիր Ժոզեֆ Սմիթի համար ոգեշնչման աղբյուր է եղել Ս. Գիրքը, որը պատմականորեն կապված է Հին աշխարհի ժողովուրդների, երկրների, աշխարհագրության և հավատալիքների հետ: Սակայն այստեղ ոչ մի հիշատակում չկա Նոր աշխարհի՝ Ամերիկա մայրցամաքի մասին: Հենց դա էլ շատ հմտորեն օգտագործեց Սմիթը՝ նոր դավանանք ստեղծելու հետ կապված իր փայլուն գաղափարը կյանքի կոչելու համար: Դրա համար նախ և առաջ Ամերիկան ևս պետք է ունենար նախապատմություն, որն էլ Սմիթը հնարեց:

Պետք էր ունենալ նաև սեփական Սուրբ Գիրք, Երուսաղեմ, Սիոն և այն ամենը, ինչ շարադրված էր Սուրբ Գրքում: Իսկ Սուրբ Գիրքն էլ փոխարինվեց Մորմոնի գրքով, որտեղ շարադրվեց Նոր աշխարհի նախապատմությունը՝ հին ժամանակներից սկսած: Հետագայում նույն սկզբունքով վերաբնակեցվեց Տիեզերքը, և ողջ տիրեզերքի համար Սմիթն ուներ փրկիչներ: Ըստ մորմոն վախճանաբանության՝ ամեն մի փրկված մորմոն դառնում է մի նոր աստված ու տեղափոխվում անծայրածիր Տիեզերքի՝ նախօրոք որոշված որևէ մոլորակ: Այստեղ էլ փրկիչ մորմոնը հիմք է դնում նոր քաղաքակրթության՝ դառնալով այդ աշխարհի համար Ադամ: Եվ այս վերաբնակեցումը շարունակվում է անվերջ:

Սմիթն իր աստվածաբանությունը շարադրել է ըստ իր «տեսլիքների»: Առաջին տեսիլքն իբրև թե Սմիթն ունեցել է դեռ 15 տարեկանում, երբ անտառում աղոթելու ժամանակ նրան տեսլանում են Հայր Աստված ու Հիսուս Քրիստոս՝ հայտնելով, որ այս աշխարհում գոյություն ունեցող և ոչ մի եկեղեցի ճշմարիտ չէ և հաճելի չէ Իրենց, և միայն նա՝ Սմիթը, կարող է վերահաստատել ճշմարտությունը: Եվ Սմիթն է լինելու նոր մարգարեն այդ նորագույն՝ վերջին օրերի հայտնությունների:

Սմիթի երկրորդ տեսիլքը համեմատելով Մովսեսի կանչի դրվագի հետ՝ ակնհայտ է դառնում դրանց նմանությունը. Մովսեսի անձն ուղղակի փոխարինված է Սմիթի անձով. «Եվ այսպես, վերը նշված թվականի սեպտեմբերի 21-ի երեկոյան քնելու պատրաստվելով՝ ես, երեկոյան աղոթք ասելով Ամենակարող Աստծուն, Նրան խնդրեցի ներել իմ մեղքերն ու զանցանքները ու նաև Իր ցուցումներն ուղարկել, որպեսզի ես կարողանամ իմանալ իմ դիրքը և վիճակը Նրա առաջ: Ես վստահ էի, որ կստանամ այդ ցուցմունքները ճիշտ այն ձևով, ինչ ձևով նախկինում արդեն ստացել էի: Մինչ ես աղոթքով դիմում էի Աստծուն, նկատեցի, որ աստիճանաբար պայծառացող ինչ-որ լույս հայտնվեց սենյակում: Քիչ անց սենյակս այնքան լուսավոր էր, որ կարծես կեսօր լիներ: Անկողնուս առջև հանկարծ մի անձնավորություն հայտնվեց: Թվում էր, թե նա կանգնած է օդում, քանի որ ոտքերը չէին դիպչում գետնին»:

Այս տեսիլքն աստիճանաբար իմաստնություն է տալիս Սմիթին, նրան պատրաստում այն առաքելությանը, որի համար ինքը՝ Սմիթը, իբրև թե նախօրոք ընտրված էր:

Բոլոր աղանդավորներն այս կամ այն ձևով կապված են որոշ անհատների հետ, որոնք համարվում են հեղինակություններ (օրինակ՝ Ռասելը՝ Եհովայի վկաների համար, Սմիթը՝ մորմոնների համար և այլն):

Ինչպես Սմիթը, այնպես էլ մյուս աղանդապետերն իրենց անձի շուրջ ստեղծում են խորհրդավոր-գերբնական պաշտամունք և իրենց համայնքների հավատացյալներին համոզում, որ կարող են վերծանել, մեկնաբանել իրենց իսկ մասնավոր տեսիլքները և Աստծո խոսքը: Նրանց հանկարծակի «այցելում են» Հովհաննես Մկրտիչը, Քրիստոսի առաքյալները, նրանց ձեռքով իրենք մկրտություն են ստանում և այլն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղանդավորական շարժումներին հարողները հիմնականում հասարակության անկիրթ, սոցիալական, հոգեբանական և ֆիզիկական ծանր դրության մեջ գտնվող կամ ցածր ինքնագնահատական ունեցող խավն են, աղանդավոր առաջնորդների համար առանձնակի դժվարություն չի կազմում հավատացյալներին իրենց ընտրյալ լինելն ապացուցելու համար: ➥ էջ 8

Պայքար ընդդեմ Հայոց Եկեղեցու պատմության իմացության

➥ էջ 4

Ներկայացնեմ դասագրքում տեղ գտած մասնագիտական սխալների, անճշտությունների մի շարք՝ համոզվելու՝ արդյո՞ք դրանք «վրիպակներ» են: Այսպես, օրինակ. «Այդ ընթացքում սկսվեց Վանի թագավորության ընդարձակման շրջանը: Այն արդեն պատրաստ էր վճռական ճակատամարտի մեջ մտնելու Ասորեստանի հետ՝ Արևելյան Ասիայում առաջնորդության, ինչպես նաև Միջերկրական ծովի արևելյան կողմով անցնող հիմնական առևտրային ուղիներում գերիշխանության համար» (էջ 39): «Տևական մի շրջան Վանի թագավորության գերիշխանությունն Արևելյան Ասիայում հակազդեցության չէր հանդիպում» (էջ 40): Երբ ԵՊՀ-ում հեղինակի հետ կայացած հանդիպման ժամանակ ես Ս. Հովհաննիսյանին հարցրի, թե ո՞րն է Արևելյան Ասիան, ինչ երկրներ է ընդգրկում, նա ընդամենը պատասխանեց՝ նոր տերմին է, առանց մանրամասնելու, թե որ երկրներին է վերաբերում այդ նոր տերմինը: Մինչդեռ «Արևելյան Ասիան» այնքան էլ նոր եզրույթ չէ. ըստ Հայկական սովետական հանրագիտարանի՝ այն «....ընդգրկում է ԽՍՀՄ և ՉԺՀ արևելյան մասը, ԿԺԴՀ, Հարավային Կորեան և Ճապոնիան» (ՀՍՀ, հտ. 2, Երևան, 1976, էջ 32): Այսպիսով, ըստ Ս. Հովհաննիսյանի, Վանի թագավորությունը տևական մի ժամանակաշրջանում եղել է Արևելյան Ասիայում գերիշխող տերություն: Հավանաբար հենց այս ժամանակներից են Հին Չինաստանում թագավորներին «վան» անվանումը տվել:

Եվս մի քանիսը. «Երկաթի օգտագործումը հանգեցրեց երկաթե գութանների կիրառմանը, ինչը հնարավորություն տվեց հերկել բազմաթիվ չօգտագործված հողատարածքներ» (էջ 48, Վանի թագավորության տնտեսությունը): «Ոռոգելի տարածքների վարն ու հերկը կատարվել են երկաթե խոփ ունեցող արորներով» (էջ 68, Երվանդական Հայաստանի տնտեսությունը): «Հեղաշրջիչ նշանակություն ունեցավ արորին փոխարինած գութանը, որի ամուր երկաթյա խոփը թույլ էր տալիս հեշտությամբ մշակել նախկինում չմշակվող խոպան հողերը» (171—172, Բագրատունյաց Հայաստանի տնտեսությունը և քաղաքները): Հարց է առաջանում՝ ինչպես եղավ, որ Վանի թագավորությունում երկաթե գութաններ էին կիրառում, Երվանդական Հայաստանում «վարն ու հերկը» կատարվում էին երկաթե խոփ ունեցող արորներով, բայց Բագրատունյաց Հայաստանում հեղաշրջիչ նշանակություն ունեցավ արորին փոխարինած գութանը: «Ոռոգելի տարածքների վարն ու հերկը կատարվել են երկաթե խոփ ունեցող արորներով» (էջ 68): Ցանկալի է, որ Ս. Հովհաննիսյանը բացատրի նաև, թե տարբերություն կա՞ վարի ու հերկի միջև:

«Վերջինս (Սամոսը կամ Շամը — Ա. Մ.) նաև իր անունով դրամներ էր հատում, որոնք մինչ օրս հայտնի ամենահին հայկական մետաղադրամներն են» (էջ 61): Սամոսի հատած դրամները մեզ հասած առաջին հայկական արքայական դրամներն են, իսկ մեզ հայտնի ամենահին հայկական մետաղադրամները հատել են Երվանդ II սատրապը և Տիրիբազը (տես Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 690):

«Ք. ա. 83 թ. գրավեցին Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը, որը դարձավ Տիգրան Մեծի գլխավոր վարչական կենտրոնը Լևանտում» (էջ 81): Նախ՝ ոչ տեղին ու ժամանակավրեպ է այս շրջանի մասին խոսելիս «Լևանտ» եզրույթի կիրառումը, քանզի այն ֆրանսիական կամ իտալական անվանում է, հետևաբար շատ ավելի ուշ ժամանակների է վերաբերում, ապա՝ դասագրքում հեղինակը չի տալիս այս եզրույթի բացատրությունը:

«Հայտնի են Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու հեղինակած «Աշխարհացույց»-ները, որոնք եզակի աշխատություններ են» (էջ 154): «Նկատենք, որ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցը», հիմնված լինելով Մովսես Խորենացու «Աշխարհացույցի» վրա, նաև ճշգրտել ու լրացրել է այն» (էջ 154): Փաստորեն, ըստ Ս. Հովհաննիսյանի, կա և՛ Խորենացու Աշխարհացույց, և՛ Շիրակացու Աշխարհացույց: Դասագրքում նման միտք գրելուց առաջ, թերևս, պետք էր ուշադիր կարդալ ականավոր պատմաբան Բաբկեն Հարությունյանի ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը համոզիչ և սպառիչ կերպով ապացուցել է, որ. ««Աշխարհացույց»-ի քննությունը ցույց է տալիս, որ այն իրոք ստեղծվել է 5-րդ դարում, և նրա հեղինակը պատմահայր Մովսես Խորենացին է: Հայ աշխարհահռչակ գիտնական Անանիա Շիրակացին «Աշխարհացույց»-ի հեղինակը չէ և չէր էլ կարող լինել: Ըստ արժանվույն գնահատելով նրա վիթխարի վաստակը Հայաստանում բնական գիտությունների զարգացման ասպարեզում՝ պետք է նշել, որ ոչ մի փաստ, եթե չհաշվենք «Աշխարհացույց»-ում տեղ գտած մի շարք ընդմիջարկություններ, չի խոսում նրա հեղինակության օգտին: «Աշխարհացույց»-ի ձեռագրերում որպես կանոն հեղինակ է հիշվում Պատմահայրը, սակայն չկա ոչ մի ձեռագիր, որ հաստատեր Անանիա Շիրակացու հեղինակ լինելը: Հարցին՝ «Աշխարհացույց»-ը որոշ խմբագրման է ենթարկվել Անանիա Շիրակացու կողմից, թե ոչ, հնարավոր չէ դրական կամ ժխտական պատասխան տալ նյութի բացակայության պատճառով» (տես Բ. Հարությունյան, «Աշխարհացույցը» և չորս Հայքերի խնդիրը», Երևան, 1997, էջ 102—103):



Եվս մեկի մասին նշեմ, և անցնենք առաջ. «Իր վեհությամբ հատկապես աչքի է ընկել մայրաքաղաք Անիի Մայր տաճարը, որը կառուցել է Մանուելի աշակերտ Տրդատ ճարտարապետը» (էջ 175): Նշենք, որ մասնագիտական որևէ մենագրության կամ սկզբնաղբյուրի մեջ մեզ չհաջողվեց որևէ վկայություն կամ ակնարկ գտնել այն մասին, որ Տրդատ ճարտարապետն աշակերտել է Մանուել ճարտարապետին: Հայտնի է, որ Մանուել ճարտարապետը ստեղծագործել է 10-րդ դ. առաջին կեսին, իսկ ըստ Կ. Հովհաննիսյանի՝ Տրդատը ծնվել է մոտավորապես 940-ական թթ. (տես Կ. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951, էջ 38): Նույնիսկ եթե ընդունենք, որ մանկահասակ Տրդատը կարող է հանդիպած լինել Մանուել ճարտարապետին, այնուամենայնիվ Մանուելին աշակերտելու պնդումը խիստ թեական է ու ապացուցման կարոտ:

Այսքանով, սակայն, չեն սպառվում խոտելի ու խոտանելի դասագրքում եղած մասնագիտական սխալները, «վրիպումներն» ու անճշտությունները: Դա մոտավորապես երեխային խաբելու նման մի բան է: Այսինքն՝ ոչ մի լուրջ մասնագետ կամ ուսուցիչ չի համաձայնի դրան, որովհետև ակնհայտ սխալը, թյուր եզրակացությունն ու մեկնաբանությունը փորձ է արվում ներկայացնելու ընդամենը որպես «վրիպում»:

— Երբ նայում ենք այս ամբողջ ընթացքին՝ պատմության դասագրքի խեղաթյուրումը, «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան ուսումնական ծրագրից դուրս թողնելը, Եկեղեցու դեմ արշավը, տպավորությունն այնպիսին է, որ պայքար է մղվում ազգայինի դեմ, կամ մենք ինքնակամ հրաժարվում ենք մեր ազգային ինքնությունից, այն ամենից, ինչը մերն է: Դեպի ո՞ւր ենք գնում, կամ դեպի ո՞ւր են մեզ տանում:

— Ցավոք, այո՛, Հայոց Եկեղեցու նկատմամբ արշավ կա, որը բազմաթիվ մասնագետներ զուգահեռեցին խորհրդային իշխանության տարիներին Հայոց Եկեղեցու դեմ տարվող քաղաքականությանը («կարմիր անաստվածները», մարտնչող տգիտությունը), երբ հարյուրներով ու հազարներով փակվեցին եկեղեցիներ Հայաստանում և ամբողջ Խորհրդային Միության տարածքում: ➥ էջ 6

Պայքար ընդդեմ Հայոց Եկեղեցու պատմության իմացության

↩ էջ 4, 5

Հայոց Եկեղեցուն նույնիսկ արգելեցին նշել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը (վախենամ՝ նորից կրկնվի): Բազմաթիվ հոգևորականներ ձերբակալվեցին, աքսորվեցին կամ մահապատժի արժանացան: Կարծես սա նմանվում է 1920—1930-ական թվականներին «Կարմիր մարտնչող անաստվածների»՝ հայ ազգային հիմնական կառույցներից մեկի՝ թերևս գլխավոր ազգային կառույցի՝ Հայ Առաքելական Եկեղեցու դեմ, ինչը ծանր հետևանքներ ունեցավ այն ժամանակ, և իրավիճակը փոխվեց Երկրորդ աշխարհամարտից հետո միայն, որովհետև խորհրդային իշխանությունները տեսան, որ Հայոց Եկեղեցու նկատմամբ իրենց վարած չարաղետ քաղաքականությամբ հանդերձ՝ Հայոց Եկեղեցին երբեք փորձ չարեց համագործակցել նացիստական Գերմանիայի կամ Խորհրդային Միության թշնամիների հետ: Պատերազմի տարիներին Հայոց Եկեղեցին կազմակերպեց հանգանակություն, ստեղծեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը և ուղարկեց գործող բանակ: Երկրորդ շարասյան կազմավորման աշխատանքներն էլ ընթացան, բայց պատերազմն ավարտվեց, ու գործն անավարտ մնաց:

Ականավոր հայ պատմաբան Նիկողայոս Ադոնցի խոսքերով՝ հայրենիքի գույնը բոլորովին նշանակությունի չունի. մենք հայրենիքը սիրում ենք ոչ թե նրա գույնի համար, այլ հայրենիք լինելու համար: Կարևոր չէ, թե հայրենիքում ով է իշխանության գլուխ՝ բոլշևիկները, դաշնակցականները, անկուսակցականները կամ որևէ այլ ուժ: Ամեն դեպքում հայրենիքը բարձրագույն արժեք է, սրբություն, և յուրաքանչյուր հայ պետք է իր գործունեությամբ, անդուլ աշխատանքով նպաստի հայրենիքի շենացմանը, զորեղացմանն ու ամրապնդմանը:

Կարծում եմ՝ պղտորված ջրերը կմաքրվեն, կպարզվի ամեն ինչ: Եկեղեցին դարեր շարունակ այնքան մղձավանջներ, պատուհասներ, դժնդակ ու սև օրեր է տեսել, թող սա վերջինը լինի: Միևնույն է՝ վաղ թե ուշ հայ հասարակությունը գիտակցելու է Հայոց Եկեղեցու նշանակությունը, արժևորելու է նրա դերը մեր պատմական ճակատագրում, մեր մշակութային ժառանգության ձևավորման, զարգացման և փոխանցման գործում, ինչպես նաև հայրենիքից դուրս ապրող հայության համախմբման, հայեցի դաստիարակության, ազգային նկարագրի ու հոգեկերտվածքի պահպանման գործում: Եկեղեցու դեմ այս օրերի պայքարը նմանեցնում եմ հողմաղացների դեմ պատերազմին...

— Չմոռանանք՝ այդ արշավն սկսել են շատ ավելի վաղ՝ 2018-ից, և դա պայմանավորված չի եղել այս օրերին ընթացող «Տավուշը հանուն հայրենիքի» շարժմամբ:

— Այո՛, հավատ չի ներշնչում այն պնդումը, որ այս ամենն սկսվել է Հայոց Եկեղեցու գործունեության կամ դիրքորոշման պատճառով: Հայաստանի նոր իշխանությունների վերաբերմունքը կրոնական մյուս կազմակերպությունների, այդ թվում՝ աղանդավորական կազմակերպությունների հանդեպ բացահայտորեն տարբերվում է:

Եվ հիմա, չգիտես ինչու, հիշել են, որ աղանդավորությունը Հայաստանում լայն տարածված է, իսկ Հայոց Եկեղեցին, փոխանակ «քաղաքականությամբ» զբաղվելու, ավելի լավ կլիներ աղանդավորության դեմ պայքար ծավալեր: Այսինքն՝ իրենց հանցավոր անգործությունը կամ իրենց իրագործած մեղքերը փորձում են բարդել ուրիշի վրա, քավության նոխազներ գտնել կամ ցանկալին ներկայացնել իրականության տեղ: Աղանդավորության դեմ պայքարում պետական մակարդակով հնարավոր էր ոչ միջնորդավորված դրսևորում լիներ, այսինքն՝ պետությունը հովանավորեր Հայոց Եկեղեցուն՝ աղանդավորական ազդապառակտիչ գործունեության դեմ տարվող պայքարում: Եվ միասնաբար հանդես գային ազգային-պետական արժեհամակարգն ու մշակույթը ժխտող քաղաքականության դեմ, որը խարխլում է հայոց ազգի, ընտանիքի և, ի վերջո, պետության հիմքերը: Ակնհայտ է նաև, որ հիշյալ կրթական բարեփոխումների շրջանակներում թիրախավորվել ու հարվածի տակ են դրվել հայագիտական առարկաները, կտրուկ նվազել են սերունդներին ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու պահանջներն ու հնարավորությունները: Ավելորդ ենք համարում բացատրել, թե որքան անհրաժեշտ է ազգանպաստ, հայեցի ու ռազմահայրենասիրական կրթությունը մեր պետությանն ու ժողովրդին, որը գտնվում է գոյաբանական վտանգների, լուրջ մարտահրավերների և պատերազմի մշտական սպառնալիքի առջև:

— Վերադառնալով դասագրքին՝ ի՞նչ իրավական հիմք է հարկավոր, և ի՞նչ բարեփոխումներ են անհրաժեշտ, որ «Հայոց Եկեղեցու պատմությունը» վերադարձվի ուսումնական առարկայացանկ:

— Դա ԿԳՄՍ նախարարության և Հայոց Եկեղեցու՝ սեղանի շուրջ նստելով, իրար հասկանալով կարող է վերականգնվել, ինչը շատ ցանկալի է:

— Դա հնարավո՞ր եք համարում:

— Իհարկե՛, հնարավորություն տեսնում եմ: Որոշ դպրոցներում ինքնուրույնաբար կարող են առարկան կամընտրանքով ուսումնասիրել, սակայն հասկանալի է, որ դասընթացը համակարգված, ըստ տարիների դասավանդման անհրաժեշտության գիտակցումով պետք է ներդրվի: Ժամաքանակի խնդիր հանրակրթական գրեթե բոլոր առարկաներն ունեն, և դժվար է պատկերացնել մի դպրոց, որը կկարողնա դասաժամ հատկացնել ու ապահովել «Հայոց Եկեղեցու պատմության» կամընտրական դասավանդումը 6—11-րդ դասարաններում:

Ուսումնասիրությունների, քննարկումների, մասնագիտական լուրջ վերլուծությունների արդյունքում ՀԵՊ առարկան պետք է վերադարձնել հանրակրթական դպրոց՝ որպես հանրակրթական պարտադիր առարկա: Դա շատ նպաստավոր կլինի, և օգտակարությունը կարճ ժամանակում կզգանք, ինչպես եղավ տարիներ առաջ:

Առարկայի վերադարձի անհրաժեշտությունը կա, դրանում համոզվելու համար պետք է լուրջ ուսումնասիրություն կատարվի՝ դպրոցում սովորողների, դասավանդողների, ծնողների, հայ հանրության վերաբերմունքը վերհանելու համար, և միայն հետազոտությունների արդյունքների հիման վրա պետք է որոշում կայացվի:

— Ավելացնելու բան ունե՞ք:

— Հիշեցնեմ, թե ինչպես է տեղի ունեցել ՀԵՊ առարկայի մուտքը հանրակրթական դպրոց. 2002 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ կառավարության միջև կնքվել է համաձայնագիր՝ ՀՀ հանրակրթական դպրոցներում «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան ներդնելու վերաբերյալ: Համաձայնագիրը ստորագրել են Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Այն ամրապնդվել է 2005 թ.՝ Վեհափառ Հայրապետի և ՀՀ ԿԳ նախարար Սերգո Երիցյանի միջև կնքված համաձայնագրով՝ կարգավորելով յուրաքանչյուր կողմին վերապահված աշխատանքներն առարկայի առնչությամբ: «Հայոց Եկեղեցու պատմությունը» 2005 թվականից ընդգրկվել է հանրակրթական դպրոցների պետական ուսումնական ծրագրի 4—10-րդ (հետագայում՝ 5—11-րդ) դասարանների առարկայացանկում:Մինչև առարկայի՝ դպրոց վերադարձնելը, իմ կարծիքով, պետք է զգալիորեն զորեղացնել, ընդլայնել և աշխուժացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի գործունեությունը (ընդլայնել շաբաթօրյա կամ կիրակնօրյա դպրոցների ցանցը, հաճախակի կազմակերպել Հայոց Եկեղեցու պատմություն և կրոնական գիտելիքներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, մշակել և տպագրել համապատասխան դասագրքեր ու ձեռնարկներ, զարկ տալ հոգևորականության հետ կրոնական թեմաներով քննարկումներին, հոգևոր գրականություն, եկեղեցական տոների, ծեսերի, խորհուրդների, բարեպաշտական սովորույթների մասին գրքույկներ հրատարակել ու բաշխել, սովորողների համար կազմակերպել ճամբարներ, ամառային դպրոցներ և այլն):

Ինձ թվում է՝ երբ ճգնաժամային պահերը հաղթահարելուց հետո վերաբերմունքը փոխվի, կգիտակցեն, որ դա անմտություն էր, և պետք չէր աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում երկրի ներսում մեծացնել կամ խորացնել բևեռացումը կամ նոր պառակտումների տեղիք տալ: Մեր ինքնիշխանությունը սասանելու, պետության հիմքերը թուլացնելու, ավելի խոցելի դարձնելու փոխարեն մեր հասարակությունն այս պահին միաբանվելու, մեր առջև ծառացած մարտահրավերներին, սպառնալիքներին դիմագրավելու առաջնահերթ խնդիր ունի: Նման քայլերը նաև առիթ են դառնում մեր երկրի վրա դրսից ավելի ակտիվ ներգործելու համար, հանգեցնում ոչ ցանկալի և ոչ ազգանպաստ որոշումների կայացմանը: Լիահույս եմ, որ «էսպես չի մնա», քանզի մենք ունենք ազգային իմաստնություն և հոգու արիություն, հետևաբար շուտով վերագտնելու ենք մեզ ու արձանագրելու ենք համազգային հաղթանակներ և առաջընթաց: Հայ ժողովուրդը վաղուց՝ հազարամյակներ առաջ է հաստատել, ապացուցել հարատևության իր իրավունքն ու արտոնաթուղթը:

Հարցազրույցը՝
Մեղրի ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

Պատառիկներ հավատացյալի օրագրից,

կամ՝ ստեղծագործությունը հոգու ազատագրումն է

Մեր ազգի ինքնագիտակցությունը ձևավորվել է քրիստոնեական գաղափարաբանության ճանաչմամբ, ըմբռնումով ու հավատով: Քրիստոս եկավ աշխարհ, սերմանեց գիտակցական ինքնազոհաբերման գաղափարը, և Ինքն անձամբ զոհաբերվեց խաչի վրա՝ կրելով մեր մեղքերի ծանր բեռը, փրկելով մեզ Իր համբերատար ու անտրտունջ համառությամբ: Ես մի պարզ ու հաստատ ճշմարտություն գիտեմ, որ քրիստոնեությունն այն լույսն է, որ մարդկության դաժան ու արյունալի պատմության ընթացքում առաջնորդել է մեզ՝ փոթորկված օվկիանոսի միջով մեր նավը փրկության ափ հասցնելով...

Հավատը հույս է, լույս է ու կյանք: Երբ ես փոքր էի, մայրս փոքր եղբորս համար, որը, պատահում էր, ուշաթափվում էր, մեր տան պատուհանի գոգին միշտ ճրագ կամ իր ձեռքով պատրաստած մոմ էր վառում ու աղոթում: Տարիներ անցան, նա ապաքինվեց, և իմ մեջ տպավորվեց դա: Մայրս հավատի սերմ ցանեց իմ մանկական հիշողության անդաստանում, և սերմն աճեց, ծլարձակեց իմ հոգում: Իմ ցանած սերմերը, սակայն, դժվարությամբ են այսօր աճում անջուր ու տատասկոտ դաշտերում: Որքան զարգանում է կյանքը, այնքան ավելի ինքնավստահ ու հպարտ է դառնում մարդը՝ հեշտասեր ու անբավ: Մարդը վստահում է իր ուժերին՝ կարծելով, թե այդ ուժն իր ներսից է, սակայն կյանքի փորձությունները ապացուցում են հակառակը: Երբ այլևս չեն լինում ո՛չ ուժ և ո՛չ հույս, Աստված Իր զորեղ աջն է մեկնում, որ քայլենք Իր հետ ու գիտակցենք՝ որտեղից է փոխանցվում ներքին ուժը: Զարմանալի ոչինչ չկա. Աստված ամենակարող է... Մենք ու մեր երկիրն այսօր կարեվեր ենք, բայց Աստված ասում է՝ վեր կացեք ու քայլեք, աղոթեք ու վստահեք Ինձ, և Ես կբուժեմ Ձեզ ու Ձեր երկիրը....

* * *

Երբ ես սգի մեջ էի՝ որդուս զոհվելուց հետո, չգիտեի՝ ինչպես տանել այդ ծանր վիշտը: Ցավս մեղմացնող ոչինչ չկար... Բոլորն ինձ հետ էին՝ ժողովուրդը, հարազատներս, ընկերներս, սփոփանքի խոսքեր էին հեղում ինձ վրա, բայց անօգուտ: Եվ ահա Աստված իմ սենյակ մտավ գիշերով և ինձ տարավ ճշմարիտ ճանապարհով՝ ամոքելով հոգիս Իր կենարար խոսքով և դուրս բերելով ինձ այդ մղձավանջից:

Փոքր ժամանակ, երբ վազում էինք գյուղամիջի ակումբի պատուհանից կինո դիտելու, հիշում եմ՝ անձրևից հետո տունդարձի ճանապարհին նշմարվում էին ցեխի մեջ կայծ տվող լուսատտիկներ, և զարմանում էինք մանկան հայացքով՝ ինչպես են նրանք լույս տալիս: Իսկ որքան պայծառ է այն լույսը, որ ճառագում է հոգուդ մեջ վերևից՝ որպես մանանա, լուսավորում միտքդ ու հոգիդ, ջերմացնում մարմինդ: Մենք պարտավոր ենք փառք տալ Աստծուն, որ լույս է բաշխում մեզ: Երբ ջուր չկա այգին ջրելու, ծառերն սկսում են չորանալ, և եթե այդ ծառերի տակ անգամ փոքր չափով ջուր լցնենք ամեն օր, հավատացեք, որ նրանք կկենդանանան...

Աշխարհն այսօր մեղքերով բարձված բեռնաձիու է նման, որ դժվարանում է քայլել, որովհետև սանձը տվել է սատանային, և պետք է հաղթել աշխարհին, ինչպես Տերը հաղթեց: Նա կտա մեզ իմաստնություն և պաշտպանվելու տանիք: Թող Տերը երկնային հավասարակշռության մեջ պահի երկիրը և օրերի ցանկում գրանցի միլիոնավոր փրկվածների անուններ...

* * *

Երազանքը վաղ թե ուշ չվում է հավքի նման, սակայն իրականությունն ապրում է մեզ հետ և մեզնից պայքար ու համբերություն է պահանջում: Չգիտենք՝ որքան է մեր կյանքի տևողությունը, բայց մեր ամեն վայրկյանի մեջ սիրո և բարության համար տեղ պիտի պահենք, ծաղիկների պես պետք է հոգ տանենք, որ միշտ դալար մնան:

Աշխարհը դարձել է եռացող կաթսա, մարդկանց հիվանդ երևակայությունը թափառում է ամեն տեղ՝ փոթորկված քամու նման: Իմ կյանքի յոթանասունհինգ տարվա ընթացքում ես հասկացել եմ, որ կյանքը տրված է մարդուն ապրելու, հասկանալու, պայքարելու, ճիշտ ճանապարհը գտնելու համար: Մարդու կյանքը նման է անավարտ ու չխմբագրված գրքի, ժամանակները չար են, սոսկալի, փոխվել են մարդիկ՝ ցավից, հուսահատությունից, անորոշությունից: Եթե աշխարհի բոլոր մարդիկ Աստված ունենային, կյանքը հրաշք կլիներ: Հոգևոր դաշտն այսօր մնում է կիսադատարկ, և ես շարունակում եմ աղոթել բոլոր անհավատների համար...

Զոյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հակոբ և Հարություն Հովնաթանյանների որմնանկաչությունը

Նաղաշ Հովնաթանի որդիներ Հակոբն ու Հարությունը, զարգացնելով հոր ավանդած արվեստը, այն առանձնահատուկ կատարելության հասցրին: Հովնաթանի մահվան տարում (1722 թ.) Հակոբը 30-ամյա երիտասարդ էր, իսկ Հարությունը՝ 15–16 տարեկան մի պատանի:

Հակոբ Հովնաթանյանը (1685–1765) հոր ավագ որդին է, գրել է բանաստեղծություններ, նկարել որմնանկարներ, սրբապատկերներ, դիմանկարներ, ինչպես նաև զբաղվել է մանրանկարչությամբ: Հակոբն իրեն անվանում էր և՛ Նաղաշ, և՛ պատկերահան:

Ծնվել է Շոռոթում և տեղի դպրոցում էլ ստացել է կրթություն: Կրթությունը շարունակել է Թովմաս առաքյալի վանքի դպրոցում, որտեղ սովորել է նաև նկարչություն, իմացել է թաթարերեն և վրացերեն (Ն. Ակիկեան, Հովնաթան Նաղաշ և Նաղաշ Հովնաթանեանք, Վիեննա, 1911, էջ 61): Հակոբը դեռ հոր կենդանության ժամանակ կարողացել է ինքնուրույն ստեղծագործել և բախտ է ունեցել երեսունյոթ տարի ապրել հոր կողքին, սովորել նրանից և՛ գրել, և՛ նկարել (Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, Ե., 1981, էջ 81): Երկար ժամանակ հոր հետ աշխատանոցում մնալով՝ յուրացրել է Հովնաթանի արվեստը և նրա մահվանից հետո սեփականացրել է Նաղաշ պատվանունը:

1715 թ. Նաղաշ Հովնաթանին Աստվածատուր Համադանցին հրավիրել է Էջմիածին՝ պատվերներ կատարելու: Հակոբը հոր հետ միասին գնացել է Էջմիածին, նկարել մի քանի պատկեր և օգնել Մայր տաճարի որմնազարդերի նկարման գործում: Ստորագրությունների բացակայության պատճառով դժվար է զանազանել նրա գործը, բայց ելակետ ընդունելով Սիմեոն Երևանցու ցուցակը և այդ շրջանում արված նկարների ոճը՝ կարող ենք առանձնացնել մի քանի գործ, որոնք տարբերվում են Նաղաշ Հովնաթանի աշխատանքներից, և վերագրել Հակոբին: Դրանցից են «Հայկ Նահապետ», «Տրդատ, Աշխեն և Խոսրովիդուխտ» որմնանկարները, որոնք Ղուկաս կաթողիկոսի կատարած վերանորոգությունների ժամանակ ամբողջ պատի ծեփի հետ միասին առանձնացվել և պահվել են (Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, էջ 82): Հակոբ Հովնաթանյանին պետք է վերագրել նաև «Սբ. Հռիփսիմե» և «Սբ. Գայանե» սրբապատկերները:

Երբ Էջմիածնում օգնում էր հորը՝ 1715–1720 թթ., Հակոբն անկասկած վրձնել է նաև այլ պատկերներ, քանի որ այդ շրջանում արված գործերը շատ-շատ են եղել, և հնարավոր չէ, որ Նաղաշը միայնակ այն ստեղծած լիներ: Հակոբը հոր հետ աշխատել է նաև այլ եկեղեցիներում: Նաղաշի մահից հետո Հակոբն սկսել է աշխատել կրտսեր եղբոր՝ Հարությունի հետ:

1720 թ. Աստվածատուր Համադանցին մարմարապատել է Էջմիածնի Մայր տաճարի ավագ խորանի ճակատը: Նրա կաթողիկոսության օրոք այդ պատի վրա պատկերներ չեն եղել, ավելի ուշ նկարվել են Աստվածամոր և տասներկու առաքյալների պատկերները: Հիմք ունենալով Սիմեոն Երևանցու «Ջամբռը», որտեղ ասվում է. «Կարապետ Ուլնեցին ետ նկարել զպատկերս երկոտասան առաքելոցն ի ճակատ ավագ խորանին եւ ետ ծաղկել ոսկեզօծ եւ գեղեցիկ գունոք» (Սիմէոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 28), կարող ենք ապացուցված համարել, որ այդ պատկերները կատարվել են 1726–1729 թթ. գահակալած Կարապետ Բ Ուլնեցու հանձնարարությամբ: Պատկերների ոճը պատկանում է Հովնաթանյանների ընտանիքին: Կարապետ Բ Ուլնեցու կաթողիկոսության տարիները համընկնում են Հակոբ Հովնաթանյանի գործունեության հետ, և հաշվի առնելով այն փաստը, որ Հակոբը հոր հետ աշխատել է Էջմիածնում, մնում է եզրակացնել, որ այդ պատկերներն սկսել է նկարել Նաղաշ Հովնաթանը, ապա շարունակել են որդիները:

Պատկերները հորիզոնականով զբաղեցնում են պատի ամբողջ լայնությունը: Կենտրոնում պատկերված է Աստվածամայրը Մանկան հետ, նրանցից աջ ու ձախ՝ վեցական առաքյալ, իսկ պատի ծայրերին տեղավորված են Ստեփանոս և Փիլիպոս սարկավագների պատկերները: Պատկերների ոճը վկայում է, որ Աստվածամոր և առաքյալների պատկերները նկարված են Հակոբի ձեռքով, իսկ սարկավագները՝ ավելի պակաս փորձի տեր այլ նկարչի:

Սբ. Գայանե և Սբ. Հռիփսիմե, հեղինակ՝ Հակոբ Հովնաթանյան

Հակոբը եղբոր՝ Հարությունի հետ Երնջակի Սուրբ Կարապետ վանքում զարդանկարներ և սրբերի պատկերներ է նկարել: Վանքի խորանի վրայի պահարանի մեջ փորագրված է. «ՌՃՀԹ թուին Սուրբ սեղանն ծաղկեցաւ ձեռամբ Յովնաթանի որդւոյն Յակոբին եւ Յարութիւնին. ուրեմն յիշեսցիք ի բարին եւ դուք յիշեալ լինեք ի Քրիստոսի» (Մերսոպ արք. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Թիֆլիս, 1906, էջ 15):

Մեղրիի Մեծ թաղի հյուսիսարևմտյան հատվածում է գտնվում դեռևս 13-րդ դարից հիշատակված Անապաստանաց վանքը (Մեղրիի վանք), որից մնացել են միայն 17-րդ դարում կառուցված Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին և կիսաքանդ նախասրահ-գավիթը: Եկեղեցու ներսը որմնանկարվել է նվազագույնը երկու անգամ՝ 1745 և 1793 թթ.: Ավագ խորանում՝ որմնախորշերի երկու շարքերը բաժանող քիվի վրա, պահպանվել են նաև զարդագոտու որոշ հատվածներ. կարմրավուն հետնախորքի վրա տեսնում ենք իրար հաջորդող մեծ երկնագույն լոտոս ծաղիկներ և դեպի վերջիններս թեքված երկարավուն, մանգաղաձև, սղոցաեզր տերևներ, որոնց կցված են ավելի փոքր երկնագույն ծաղիկներ: Ժամանակային առումով 1745 թվականը համապատասխանում է Հակոբ և Հարություն Հովնաթանյանների ստեղծագործության ակտիվ շրջանին, այնպես որ կարելի է ենթադրել, որ Անապաստանաց վանքի հին շերտի որմնանկարները ևս ստեղծել են նրանք (Ա. Ավետիսյան, Մեղրիի Անապաստանաց վանքի որմնանկարները, Լրաբեր հասարակական գիտությունների, № 3, 2019):

Հակոբ Հովնաթանյանն ապրել է ութսուն տարի: Նա նաև զբաղվել է մանրանկարով և ձեռագրերի պատկերազարդումով:

Հարություն Հովնաթանյանը (1700–1780) ընթացել է հոր և եղբոր ուղիով: Այն, որ նա Նաղաշի կրտսեր որդին էր, իմանում ենք հետևյալ տողերից. «Կարօտ մնացի շնորհացդ եւ բանից, ես եւ Յարութիւն փոքրիկ պատանիդ» (Նաղաշ Հակոբ, Բանաստեղծություններ, էջ 215): Հարությունը ծնվել է Շոռոթում: Տեղի դպրոցից հետո կրթություն է ստանում Սբ. Թովմաս առաքյալի վանքում և դառնում հոգևորական:

Հարությունը վստահաբար, բացի հորը և եղբորը օգնելուց, նաև ինքնուրույն է աշխատել, սակայն, ցավոք, այժմ նրա կյանքի և գործունեության մասին հայ գրական մամուլում և արխիվային նյութերում քիչ տեղեկություններ են պահպանվել:

Հարությունի աշխատանքներից հայտնի է մեկ ձեռագիր «Քարոզգրքի» ձևավորում: Քարոզգրքի ծաղկանկարները շքեղ են՝ գունային հարուստ երանգավորմամբ: Լուսանցազարդերն ու գլխատառերը հիշեցնում են ժամանակի ձեռագիր և տպագիր նախշազարդերը, չնայած այս ամենին՝ զգացվում է Հարությունի անհատականությունը: Նա ճաշակ է ցուցադրում էջը կառուցելիս և գույների ընտրության ժամանակ (Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Ե., 1974, էջ 167):

Հայտնի է նաև Հարություն Հովնաթանի՝ Կ. Պոլսում կատարած Ղազար Ջահկեցու երգարանի գեղեցիկ գրչությունը (Գ. Լևոնյան, Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, № 2, էջ 52):

Հովնաթանյան եղբայրներն իրենց ողջ կյանքում միասին են աշխատել, երկուսով նկարազարդել են մի «Յայսմաւուրք», նրանց մոնումենտալ աշխատանքներից են Աստապատի Սբ. Ստեփանոս վանքի որմնանկարները: Հակոբ և Հարություն Հովնաթանյանների կարևոր աշխատանքներից են նաև Ղազարապատ հյուրանոցը և Մայր Աթոռի Հին Վեհարանը: Նրանք կատարել են նաև հաստոցային աշխատանքներ, ընդ որում՝ հայ իրականության մեջ հենց նրանք են առաջինը լիարժեքորեն օգտագործել յուղաներկը:

Հարությունի և Հակոբի միասին կատարած գործերից առաջինը Երևանի Մատենադարանի № 1533 «Յայսմաւուրքն» է («Հարություն և Հակոբ Հովնաթանյանների նորահայտ մանրանկարները», «Գրական թերթ», Երևան, 1961, № 9): Այն բաղկացած է 509 թերթից, 240 և ավելի դիմանկարից, 220 կոմպոզիցիոն աշխատանքից և մի շարք զարդանախշերից:

1740 թ. մարտի 3-ին Մկրտիչ եպս. Ջահկեցին դիմում է Նախիջևան քաղաքի և շրջակա գյուղերի բնակիչներին՝ օգնություն ցույց տալ Երնջակի Սբ. Կարապետ վանքը նկարազարդելուն (Մերսոպ արք. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 465): Նա օրհնության գրով հրավիրում է Հակոբ և Հարություն Հովնաթանյաններին վանքը նկարազարդելու: Օրհնության գրի մեջ հիշատակվում է նաև Նաղաշ Հովնաթանը: Հավանաբար Մկրտիչ եպս. Ջահկեցուն հայտնի չի եղել Նաղաշ Հովնաթանի մահը:

Հակոբ և Հարություն Հովնաթանյանների որմնանկարչական աշխատանքների հետքերը պահպանվել են նաև Ազնաբերդի Սբ. Գրիգոր եկեղեցում (Ա. Այվազյան, Ազնաբերդի ս. Գրիգոր եկեղեցու որմնանկարները, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 1, 1977, էջ 246–252): Խորանի կամարների, դահլիճի հարավային պատի, ավանդատների մուտքերի վերին մասերի, բեմի ճակատի (12 առաքյալների դիմապատկերները), խորանի և չորս մույթերի վրայի երկու տասնյակից ավելի կոմպոզիցիոն ու ավետարանական աշխատանքները եզրված են տերևներով ու ցողուններով, ծաղկազարդերով և առնված են սև եզրագծերի մեջ (Ա. Այվազյան, Նախիջևանի որմնանկաչական արվեստը, էջ 67):

Անկասկած, Հովնաթանյան դպրոցին են պատկանում Գողթնի և շրջակա վայրերի մի քանի եկեղեցիների հին որմնանկարները և մեծ թվով անանուն սրբապատկերներ (Գ. Լևոնյան, Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, № 2, էջ 52):

Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցին 2013–2015 թթ. վերանորոգվել է, և ուշ շրջանում արված որմնանկարների շերտի տակ բացահայտվել են Հովնաթանյանների փառահեղ աշխատանքները: Դրանց մեծ մասը մնացել էր մրի հաստ շերտի տակ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 200 քմ պահպանված պատկերները եկեղեցու որմնանկարների մի փոքր մասն են միայն, և որ տաճարն ամբողջովին պատված է տարբեր ժամանակաշրջաններում արված որմնանկարներով: Սբ. Գևորգի որմնանկարները դեռ խոր ուսումնասիրության կարիք ունեն, բայց արդեն այսօր արվեստագետները հակված են մտածելու, որ դրանց զգալի մասը պատկանում է Հովնաթանյանների վրձնին:

Մայր Աթոռի՝ 21-րդ դարի առաջին քսանամյակի գործունեությունն առավել աչքի է ընկնում լայնամասշտաբ շինարարությամբ, որի մեջ առանձնահատուկ է եկեղեցաշինությունը: 21-րդ դարի եկեղեցաշինության թագն ու պսակը Մայր տաճարի ներկայիս հիմնանորոգությունն է, որն սկսվել է դեռևս 2012 թվականին: Մայր տաճարի վերանորոգմամբ զբաղվել են բազմաթիվ հայրապետներ, սակայն այն ծավալով և հիմնավորությամբ, որով արվում է ներկայիս հիմնանորոգությունը, երբևէ չի արվել: Տաճարի վերականգնողական ընթացիկ աշխատանքների ժամանակ որմնանկարների թաքնված շերտեր են գտնվել: Դրանք պատկերված են տաճարի 4 անկյուններում գտնված աղյուսաշեն կեղծ թաղերի վրա: Աշխատանքների առաջին փուլում վերականգնող նկարիչները 1950-ականներին արված որմնանկարների շերտերն են վերականգնել, նոր բացահայտված շերտն ավելի արժեքավոր է և ամենայն հավանականությամբ արվել է 1715 թ.: Սրանք այն որմնանկարներն են, որոնք կատարել է Նաղաշ Հովնաթանն իր որդիներ Հակոբի և Հարությունի հետ: Հովնաթան Հովնաթանյանն արդեն 1800-ականների սկզբին կատարել էր նոր շերտի կազմում, բայց, ցավոք սրտի, որպես հիմք արված կրաշաղախի շերտը շատ թույլ է և անկայուն: Դա է եղել պատճառը, որ 1900 թթ. որոշել են ամբողջ նկարները թափել և ստեղծել նոր որմնանկարներ: Տաճարի հարավարևմտյան մասում գտնված որմնանկարը հնարավոր է ամրակայել և ցուցադրել: Որմնանկարի ներկի շերտը կատարված է տեմպերային տեխնիկայով, ոսկեգույնը բավականին լավ է պահպանված, կարմիր և կանաչակապտավուն շերտերը թույլ են: Բացահայտված շերտի տակից նոր շերտ է բացվում, դրանք գծային լուծումներ են, որոնք խաչվող թաղերում ամեն նիստի վրա կազմում են քառաթև խաչ: Առաջին նկատելի շերտը 1954–1955 թթ. վերականգնման աշխատանքների արդյունքն է, իսկ նախորդ շերտերը՝ Հովնաթանյանների: Աշխատանքներ են տարվում տաճարի հարավարևմտյան կամարի տակ ի հայտ եկած որմնանկարի շերտն ամբողջացնելու համար, գունային լրացումներ կատարելով՝ փորձագետները փորձում են շարունակել Հովնաթանյանների գործը: Աշխատաքները կատարվում են Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ:

Հակոբ և Հարություն Հովնաթանյանների գործը շարունակելու և հայ գեղանկարչությունը մի նոր աստիճանի բարձրացնելու դերը վիճակված էր Հովնաթանյան տոհմի հաջորդ սերունդներին:

ԱՆԻ ՏԻՐԱՑՈՒՅԱՆ
Տ. Սարգիս քհն. ՍԱՐԴԱՐՅԱՆ

Հայաստանում գործող հիմնական աղանդները և դրանց վտանգավորությունը

➥ էջ 5

Պետականության հիմքերի խարխլման առումով առավել վտանգավոր է *Եհովայի վկաներ* աղանդավորական կազմակերպությունը, որը ՌԴ Գերագույն դատարանի որոշմամբ 2017 թ. ճանաչվեց ծայրահեղական: Նրանց գործունեությունը Ռուսաստանում արգելվեց, իսկ ունեցվածքը բռնագրավվեց: Ռուսաստանում Եհովայի վկաներ աղանդի գործունեության արգելքից հետո մամուլում տեղեկատվություն հայտնվեց, որ կազմակերպության ռուսաստանյան մասնաճյուղի ֆինանսական և մարդկային ռեսուրսների ներհոսք է սպասվում դեպի հետխորհրդային այլ երկրներ, նաև Հայաստան:

Բոլոր աղանդներին հատուկ խիստ վերահսկողությունը միմյանց նկատմամբ առավել բնորոշ է Եհովայի վկաներին: Նրանք գրեթե երբեք մենակ չեն լինում, շրջում են խմբով, քարոզում գոնե մեկ գաղափարակից ընկերոջ հետ՝ այդպիսով վերահսկելով միմյանց:

Աղանդավորական կառույցներն ունեն խիստ կազմակերպչական օրենքներ, որոնք օգնում են առաջնորդներին ուշիուշով հետևել իրենց հոտի անդամներին: Կառույցների անխափան աշխատանքի համար շատ կարևոր է հնազանդությունը, առանց որի համայնքը չի գոյատևի: Աղանդներում ընդհանրապես չի խրախուսվում ինքնուրույն մտածելը, սեփական կարծիքն արտահայտելը: Եհովայի վկաները ընդունված կանոններից շեղվողներին աստիճանաբար մեկուսացնում են, ու եթե չի խրատվում, «կտրում են», այսինքն՝ հեռացնում են «Եկեղեցուց»: Արգելվում են կտրվածին անգամ բարևելը, տուն հրավիրելը, նրա տուն գնալը և այլն: Իսկ եթե կտրվածն ընտանիքի անդամ է, պետք է հնարավորինս սահմանափակել նրա հետ շփումը: Ավելին՝ նրանք հավատում են, որ կտրվածին պետք է Աստված էլ «կտրի»:

Ժամանակակից աղանդների բոլոր «մարգարեությունները», որպես կանոն, վերաբերում են Քրիստոսի երկրորդ գալստյանը: Այս առումով ևս շատ առաջ են անցել Եհովայի վկաները: Նրանք անդադար քարոզում են աշխարհի վերջը, իբրև մարդիկ ապրում են «վերջին օրերում»: Ըստ նրանց՝ Արմագեդոնը վերապրելու և դրախտում ապրելու հույս կարող են ունենալ միայն նրանք, ովքեր ապրում են Աստվածաշնչի համաձայն: Եվ քանի որ, ըստ Աստվածաշնչի, ապրում են միայն Եհովայի վկաները, ապա մահանալուց հետո հարություն առնելու հնարավորությունն ընձեռվում է միայն իրենց:

Եհովայի վկաների առաջնորդներն արդեն մի քանի անգամ մարգարեություն են արել աշխարհի վերջի մասին և բնականաբար սխալվել: Օրինակ՝ 1914-ին, 1918-ին, 1925-ին, երբ, ըստ նրանց, հարություն պետք է առնեին և երկիր վերադառնային Աբրահամը, Իսահակը, Հակոբը և այլ մարգարեներ: Սակայն, ի տարբերություն այլ աղանդների, որոնք աշխարհի վերջը գուշակելիս ընդունում են, որ սխալվել են, Եհովայի վկաները միշտ արդարանում են և տարբեր բացատրություններ գտնում սխալ հաշվարկի համար: Ավելին՝ Եհովայի վկաների աղանդի հիմնադիր Ռասելը, չհաշտվելով երկրորդ գալստի հետ կապված իր չիրականացած «մարգարեության» հետ, յուրովի հաշվեհարդար տեսավ քրիստոնեության հետ: Նա իր յոթհատորյա երկերում Աստվածաշնչից հանեց իր համար անընդունելի բոլոր գաղափարները և հիմնեց «Սուրբ գրքի ուսումնասիրությունների» իր ընկերությունը:

Անդադար քարոզելով աշխարհի վերջը՝ Եհովայի վկաներն ստեղծում են վախի, անվստահության և հուսահատության մթնոլորտ: Այսինքն՝ աշխարհի վերջի հանդեպ վախ ներշնչելն է նրանց նպատակը: Փողոցում պատահական անցորդներին մոտեցող միշտ նույնաբովանդակ հարցերով են սկսում իրենց քարոզը: «Գիտե՞ք՝ երբ է լինելու աշխարհի վերջը», «Գիտե՞ք՝ ձեր երեխային ինչ ապագա է սպասում», «Գիտե՞ք՝ ձեզ ինչ դժբախտություններ են սպասում», «Գիտե՞ք՝ ով է վերապրելու Արմագեդոնը» և այսպես շարունակ: Իհարկե, շատերը նրանց չեն էլ փորձում լսել, սակայն ոչ բոլորը: Նման քարոզիչներին երբևէ լսած ցանկացած մարդու մեջ կարող են առաջանալ վախեր՝ կապված ապագայի հանդեպ, կամ պազապես տագնապային անհանգիստ վիճակ ստեղծվել: Սա ոչ այլ ինչ է, քան կրոնական գաղափարների ներքո կատարվող մարդու իրավունքների խախտում:

Իսկ ինչո՞ւ են Եհովայի վկաներն այդքան սիրել աշխարհի վերջի և դրան պատրաստվելու գաղափարը: Մշտապես պատրաստ լինելով «վերջին»՝ Եհովայի վկաներն անհիմաստ են համարում ցանկացած նյութական հարստություն: Աշխարհի վերջին սպասող մարդու համար ոչ մի արժեք չունեն աշխատանքը, ընտանիքը, մասնագիտացումը: Եվ աշխարհի վերջից առաջ նրանք վաճառում են իրենց ունեցվածքը, տները և ամբողջ գումարը փոխանցում կազմակերպության ղեկավարներին: Բազմաթիվ են դեպքերն ամբողջ աշխարհում և նաև Հայաստանում, երբ Եհովայի վկաները, սպասելով աշխարհի վերջին, վաճառել են իրենց ողջ ունեցվածքը, փոխանցել ղեկավարներին և սպասել: Սակայն ոչ թե աշխարհի, այլ իրենց համար նորմալ կյանքի վերջն է եկել, դարձել են անտուն և անգործ:

Ընդհանրացնելով՝ կարելի է առանձնանշել Եհովայի վկաների աստվածաբանության մի քանի առավել ուշագրավ սկզբունք:

Հիսուսն Աստված չէ, այլ մարդ, բայց ամենամեծ մարդը, որ երբևէ եղել է աշխարհում: Սուրբ Գրքերում «Աստված» բառը պարզապես փոխարինված է «Եհովա» եբրայեցական քառագրով (տետրագրամմով): Այդ Եհովային էլ վերագրվում են Սուրբ Հոգու և Որդու զորությունները: Արմագեդոնն էլ մեկնաբանվում է որպես պատերազմ Քրիստոսի Եկեղեցու և բոլոր ոչ վկաների դեմ:

Եհովայի վկաները չեն նշում Ամանորը, Սուրբ Ծնունդը, ծննդյան օրերը և շատ այլ տոներ ու սովորույթներ՝ համարելով դրանք հեթանոսական ծագում ունեցող: Չեն մասնակցում ընտրություններին, պատիվ չեն տալիս պետական դրոշին:

Եհովայի վկաներն ունեն նաև շատ ավելի վտանգավոր համոզմունքներ: Դրանցից հարկ է առանձնացնել զինվորական ծառայությունից հրաժարվելը, որի փոխարեն որոշ երկրներում՝ այդ թվում Հայաստանում, զորակոչման ենթակա Եհովայի վկաներն իրականացնում են այլընտրանքային աշխատանքային ծառայություն: Առավել վտանգավոր է ոչ այնքան բանակում ծառայել կամ չծառայելը, որքան դարավոր ոսոխին թշնամի չհամարելը: Եհովայի վկաները հավասարության նշան են դնում բոլոր մարդկանց միջև՝ անկախ ազգից, դեմ են ցանկացած պատերազմի: Սա իրոք ստեղծում է իրական վտանգ անվտանգային լուրջ մարտահրավերների առջև կագնած մեր երկրի համար: Այսինքն՝ ցանկացած Եհովայի վկա հավանական դասալիք է, մարդ, որը չի պաշտպանելու իր երկիրը վտանգի ժամանակ:

Եվս մեկ վտանգավոր թեզ՝ առաջ քաշված Եհովայի վկաների կողմից. նրանք հրաժարվում են ամբողջական արյան և դրա հիմնական բաղադրամասերի՝ էրիթրոցիտների, լեյկոցիտների, թրոմբոցիտների և պլազմայի փոխներարկումից՝ անկախ հիվանդի տարիքից և առողջական վիճակի ծանրությունից: Նրանց համայնքի անդամներին արգելված է արյուն տալ՝ ուրիշներին ներարկելու, և պահեստավորել սեփական արյունը՝ իրենց իսկ ներարկելու համար:

Հայաստանում անխափան գործում է և բազմաթիվ հետևորդներ ունի նաև «Կյանքի խոսքը» կոչված աղանդը՝ իրենց ավետարանչական հավատքի քրիստոնյաներ համարող «Եկեղեցին»:

Համացանցում՝ մասնավորապես «YouTube» հարթակում, կարելի է հանդիպել «Կյանքի խոսքը» աղանդի բազմաթիվ տեսանյութերի: Աղանդն իր գոյության շուրջ 30 տարվա ընթացքում համայնքներ է ձևավորել Հայաստանի տասնյակ քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև արտերկրում: Աղանդի պաստոր Գոռ Մեխակյանը 2020 թ. Արցախյան պատերազմից հետո իր հավատացյալների հետ հերթական հավաքի ընթացքում խոսում է, ինչպես ինքն է ձևակերպում, «Ղարաբաղի վրայի անեծքի» մասին: Հենց այս վերնագիրն էլ կրում «YouTube»-ում տեղադրված տեսանյութերից մեկը: Իր քարոզի ընթացքում պաստորը բոցաշունչ պատմում է այն մասին, որ Ղարաբաղի հողի վրա 25 տարի է՝ մի անբացատրելի անեծք կա, որ այդ հողն այդքան արյուն խմելուց հետո էլի է ուզում և չի կշտանում: Եվ առաջարկում է գնալ ու այդ անեծքը հանել: Նաև խոսում է այն մասին, որ հայ ընտանիքում տղա զավակի ծնունդն ավելի շատ մտահոգություն է առաջացնում: Իրենց զավակներին փրկելու, այսինքն՝ Ղարաբաղից ազատելու համար ծնողներն ստիպված արու զավակին արտասահման են «փախցնում»: Եվ վերջում, որպես մխիթարանք, ավետում է, որ այժմ այդ վախից իրենք դուրս են եկել, Ղարաբաղի ժողովուրդն այդ ամենը սիրում է, թող ինքն էլ իր հողի համար պայքարի:

Առհասարակ, հետխորհրդային երկրներում տասնամյակներ տևած աթեիզմից հետո մեծ հետաքրքրություն կա հոգևոր կյանքի նկատմամբ: Երբ խորհրդային հասարակարգին բնորոշ աթեիզմը մերժվեց, դրական համարվեց հավատքի ցանկացած դրսևորում՝ առանց էական տարբերության կրոնների միջև, և սրանից օգտվեցին աղանդավորական շարժումների հիմնադիրները՝ կրոնական ու հոգևոր զարգացման քողի տակ հետխորհրդային երկրներում տարածելով սեփական իշխանությունը:

Հայաստանում աղանդավորների ներթափանցումը մեծ թափ ստացավ հատկապես 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո. Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը մուտքի արտոնագիր տվեց մորմոն միլիարդատեր Ջոն Հանթսմանկրտսերին, Հայաստանում սկսեց գործել նաև ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի կողմից բարեգործական հիմնադրամի անվան տակ ստեղծված «Ժողովրդավարության ազգային հիմնադրամը»՝ NED-ը, որն առաջնորդում է աղանդավորական բոլոր կառույցները: Դա կարելի էր ընկալել որպես բարի կամքի դրսևորում, սակայն իրականում կրոնական հանդուրժողականության քողի տակ խորհրդային ամբողջատիրական (տոտալիտար) հասարակության համար խորթ երևույթներ էին քարոզվում, ինչպես միասեռականությունը, միասեռական ամուսնությունները, թմրամոլությունը: Այս քարոզների վերջնանպատակն այդ երկրների տնտեսական, քաղաքական ու հոգևոր-մշակութային հիմքերը քանդելն է:

Անժխտելի է կրոնական աղանդների դերը նաև համաշխարհային հեղաշրջումների գործում: Ժամանակակից աշխարհին հայտնի են աղանդավորական մի շարք շարժումների հետևորդ հեղափոխական առաջնորդներ, ինչպես ուկրաինական մայդանի հեղափոխության ամենակարկառուն դեմքերից, «Ժողովրդական ճակատ» կուսակցության քաղխորհրդի ղեկավար Արսենի Յացենյուկը, որը աենթոլոգիական եկեղեցու անդամ է:

Կամ, օրինակ, Վրաստանում վարդերի հեղափոխության ժամանակ ակտիվ դերակատարություն ունեցավ «Հավատքի խոսք եկեղեցին»՝ ընտրություններից հետո ստանալով նախարարի հինգ աթոռ:

Դատելով 2014-ի հունիսին Ադրբեջանում Եհովայի վկաների աղանդի անդամների զանգվածային ձերբակալությունների մասին հաղորդագրություններից՝ այդ մուսուլմանական երկրում էլ արևմտյան նմանատիպ աղանդները հասցրել են խոր արմատներ ձգել: Այնպես որ գործ ունենք համակողմանի իրավիճակի, այլ ոչ միայն տարածաշրջանի քրիստոնյաների դեմ ոտնձգության հետ:

Ապակառուցողական պաշտամունքների զոհերի օգնության և վերականգնման կենտրոնի ղեկավար Ալեքսանդր Ամարյանի բնութագրմամբ՝ աղանդն առաջին հերթին իշխանություն է և փող: «Գումարները բաժին են հասնում աղանդների ղեկավարներին, իսկ աղանդների նկատմամբ իշխանությունից օգտվում են քաղաքական կուսակցությունները: Աղանդավորները քաղաքական ուժերի համար ընտրազանգված են»,— համարում է նա ու հավելում, որ աղանդավորների դասագրքերի մեծ մասը՝ մոտ 90 տոկոսը, նման է անվտանգության ծառայությունների ձեռնարկների: Ամարյանի համոզմամբ՝ աղանդների անդամներին հավաքագրում են, կեղծիքով ներքաշում, բռնի կերպով պահում հոգեբանական ազդեցության տակ:

Ազգակործան այս աղանդների դեմ Հայ Առաքելական Եկեղեցին պայքարում է տարբեր եղանակներով: Կարելի է ասել, որ Եկեղեցու յուրաքանչյուր սպասավոր զինվոր է այս պայքարում: Աղանդավորների հսկայական բանակը թվապես մի քանի անգամ գերազանցում է Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորներին: Այստեղ իր դերն ունի նաև այն հանգամանքը, որ Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդները չեն պարտադրում իրենց հայացքները շրջապատին, մինչդեռ ամեն մի շարքային աղանդավոր իր գործի գիտակ է և ջերմեռանդորեն քարոզում է իր կրոնական հայացքները: Եթե հաշվի առնենք նաև նրանց ֆինանսական, նյութական հնարավորությունները, որոնց թիկունքում կանգնած են գլխավորապես ԱՄՆ-ը և հավաքական Արևմուտքը, ապա համակարգային պայքարը պետության ներգրավմամբ դառնում է հրամայական:

Հերմինե ՍԱՀԱԿՅԱՆ

Աստուածաշունչ՝ գիրք գրոց



Իրական ճշմարտությունը

Երանելի է այն մարդը, որն ամբարիշտների խորհրդով չի շարժուում, մեղաւորների ճանապարհին ոտք չի դնում եւ յանցագործների հետ համախառն չի լինում, այլ հաճոյք է սպանում Տիրոջ օրէնքներից եւ գիշեր-ցերեկ խորհում է Նրա պատուիրանների մասին:

Սաղմոս, 1:2

ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

ՅՈՒԼԻՍ

† ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ (ՎԱՐԴԱՎԱՌ) – յուլիս 7

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am

web կայք՝ **krishayas.wordpress.com** **etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan**

Ստոր. տպագր. 3.07.2024 թ.

Տպաքանակը՝ 1265